

## ԻՏԱԱԿԱՆ Rai news 24 ՊԱՏԿԵՐԱՍԹԻՒԻ ԿԱՅԱՆԸ ԶԵՆՊՈՒՆԵՅՑ ՍՓՈՒԷԼ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻՆ ՇԵՏ ԻՐ ԹՂԹԱԿԻՅԻՆ ՀԱՐՅԱԶՐՈՅՅԸ

Երեքշաբթի, 26 հոկտեմբեր 2019-ին, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ իտալական Rai news 24 պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյց մը ունեցաւ: Հարցազրոյցը պիտի սփռուի Երկուշաբթի, 2 հեկտեմբեր 2019-ին, սակայն անհասկնալի պատճառներով իտալական պատկերասփիւռը չսփռեց զայն:



Հարցազրոյցի ընթացքին Ասատ յայտնեց, որ Երուսաղէմ, ԱՄՆ-ի եւ Թուրքիոյ կողմէն, ահաբեկիչներուն աջակից հանդիսանալով գլխաւոր դեր ունեցան Սուրիոյ մէջ քառսփ ստեղծման եւ բնակչութեան տեղահանման մէջ:

Ասատ անդրադառնալով քիմիական թղթածրարին յայտնեց, որ պատերազմի սկիզբէն ի վեր Սուրիան հաստատեց, որ սուրիական բանակին մօտ քիմիական զէնքեր չեն գտնուիր: Քիմիական զէնքերու Կանխարգիլման Կազմակերպութեան զեկոյցները փաստեցին, որ Սուրիան ճշմարտախօս էր եւ իրապէս քիմիական զէնք չէր օգտագործած:

Ասատ շեշտեց, որ աւելի ուշ Քիմիական զէնքերու Կանխարգիլման Կազմակերպութիւնը աղաւաղեց զեկոյցը պարզապէս, որովհետեւ ամերիկացիները այդպէս հրամայեցին: Կազմակերպութիւնը այս արարքով փաստեց իր քաղաքականացած ու կողմնակալ մօտեցումը:

Ասատ կ'ընդգծէր թուրք այն պետութիւններուն, որոնք միջամուխ կ'ըլլան Սուրիոյ ներքին հարցերուն, վերջ տալ իրենց այս ընթացքին եւ գործել միջազգային օրէնքներուն եւ սկզբունքներուն համաձայն, ինչ որ դրական ազդեցութիւն պիտի ունենայ Սուրիոյ ժողովուրդին վրայ:

## ՍՈՒՐԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՈՒՑԹԻՆ ԱՅՅԵԼԵՅ ԲԵՐԻՈՅ ԸՅՈՅ ԹԵՄԻ ԱՈՒՋՆՈՐԴԱՐ

Երեքշաբթի, 10 հոկտեմբեր 2019-ին Սուրիոյ Հանրապետութեան Մուֆթի տոքթ. Ամին Դետրոտտին Հասուն պատուիրակութեան մը հետ այցելեց Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարան եւ հանդիպում ունեցաւ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի հետ:



Այս այցելութիւնը վերջին վեց ամսուան ընթացքին Հանրապետութեան Մուֆթիին Ազգ. Առաջնորդարան երկրորդ այցելութիւնն էր, որ ընթացաւ չէրմ մթնոլորտի մէջ:

Մուֆթին բարձրօրէն գնահատեց Բերիոյ Հայոց Թեմին ներս տարուող բազմաբնոյթ աշխատանքները, համայնքի գաւակներուն այլազան ոլորտներու մէջ վերակառուցման աշխատանքներու մղելու թեմին ծրագիրը:

Սրբազան հայրը շնորհակալութիւն յայտնեց մուֆթիին այցելութեան համար, ապա ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ողջոյնը փոխանցեց անոր:

Կողմերը գրուցեցին կրօններու երկխօսութեան, գործակցութեան եւ յարաբերութիւններու ամրապնդման մասին:

Իր կարգին, Հանրապետութեան Մուֆթին անդրադարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Նորին Սրբութեան եւ Բերիոյ Հայոց Թեմին հետ սերտ յարաբերութիւններուն:

Հանդիպումին ներկայ էին նաեւ Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան եւ Կրօնական ժողովի ներկայացուցիչները:

## «ԺՈՂՎՐԿԱՆՈՒԵՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ, ՄՇԱՆՈՐՈՎ ՈՒՏՏՈՎ» ՀԱԼԵՂԱԶԱՅՈՒԹԻՒՆԸ ՇԵՂ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՅԻՇԱՏԱԿԵՅ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՇՏՆԱԿՈՒԹԵԱՆ 129-ԱՄԵԱԿԸ

Կիրակի, 8 հոկտեմբեր 2019-ին, հալէպահուիւնը «Գ. Եսայեան» սրահին ներս շքեղ տօնախմբութեամբ յիշատակեց ժողովրդանուէր ծառայութեամբ, հաստատուն կաղնիի նման ժամանակներու դժուարութիւններուն կրօնք տուած ու իր շարքերուն ողջ ներուժը ազգին ու հայրենիքին ի սպաս դրած ՀՀԴ-ի 129-ամեակը:



Սրահին մուտքին ներկաները դիմաւորուեցան ՀՄԸՄ-ի փողերախումբին հնչեցուցած ազգային երաժշտութեամբ:

Հանդիսութիւնը սկսաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով, կատարողութեամբ Ռուզան Պարսումեանի:

ՀՀԴ-ի տօնը շնորհաւորելու եկած էին հալէպահայ երեք համայնքա-



պետները, համայնքներու ներկայացուցիչներ, ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմեն Սարգսեան, ՀՀ մարդասիրական օժանդակութեան խումբի Հիւպատոսութեան ներկայացուցիչ գնդապետ Արկատի Տոնտեան, Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Իշխանութեան, ՌԱԿ-ի Կեդրոնական Մարմնի, հալէպահայ մշակութային, բարեսիրական, հայրենակցական, մարզական եւ կրթական միութիւններու ներկայացուցիչներ ու հոծ բազմութիւն մը:

Ձեռնարկին հայերէն բացման խօսքով հանդես եկաւ Փաթիլ Վարդապետեան, յայտնելով որ Դաշնակցութիւնը սեփական հողին վրայ ազատ եւ ինքնիշխան ապրելու իրաւունքին ծնունդն էր, որ իր դասանած գաղափարախօսութեամբ եւ գործելաճոճով եղաւ այն եզակի կազմակերպութիւնը, որ համախմբեց հայ ժողովուրդի հատուածները եւ բոլորին ճիգերը մէկտեղելով ուղղեց դէպի մէկ եւ սրբազան Նայատակ:

Արաբերէն բացման խօսք արտասանեց փաստաբան Պայքար Թովմասեան: Ան դիտել տուաւ, որ հայ ժողովուրդը երկար տարիներու մաքառումներէ ետք, փառաշուք անցեալին ներշնչումով, Նահատակներով, վրիժառու բազուկներով կերտեց իր հայրենիքն ու ձեռք բերաւ իր իրաւունքներուն մէկ մասը:

Օրուան բեմավարներ Սարին Խալոյեան եւ Ներսէս Պարսումեան տեսերիզի ցուցադրութեամբ Նախ ներկայացուցին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անշեղ ուղին, անոր արձանագրած նուաճումներն ու ձեռքբերումները: Երկրորդ բաժինով անոնք յատկապէս լուսարձակի տակ առին Սուրիոյ պատերազմական տարիներուն կազմակերպութեան ժողովրդանուէր ծառայութեան հոլովոյթը:

Ազգային, յեղափոխական երգերը դարեր շարունակ ժողովուրդին հիւսած պատմութեան անկեղծ արտայայտութիւնը հանդիսացած են, աւիւն ու եռանդ ներշնչելով նորահաս սերունդներուն: Այս իրականութենէն մեկնելով, Համազգայինի «Չուարթնոց» երգչախումբը քառաձայն, հնչեղ կատարումով մեկնաբանեց ազգային-յեղափոխական երգեր, գեղարուեստական ղեկավարութեամբ Գայիանէ Սիմոնեան-Տերեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Ռուզան Պարսումեանի:

Հաւաքական աշխատանքի շատագով կազմակերպութեան շրջանի խօսքը արտասանեց Յակոբ Զիլեճեան:

Զիլեճեան ներկաները ողջունելէ ետք ըսաւ, որ ՀՀԴ-ն ռահվիրան հան-

Լուսին Ապաճեան-Զիլեճեան  
 Ետք. 12 16

Խմբագրական

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Դաշնակցութեան օրուան յիշատակումը տօնական հանդիսութիւններու սահմաններէն դուրս հանելով, հայկական մեր կեանքին դաշնակցականի հայեացքով նայելու, դաշնակցութեան գաղափարաբանութեան հիմնական տարրերուն գործնականացման հսկելու եւ երիտասարդ տարրը մեր ազգային արժէքներուն հաղորդակից պահելու առիթ պէտք է հանդիսանայ նաեւ, հեռու գովասանքի ու փառաբանանքի կրկնուող խօսքերէն, զորս պատմութեան էջերուն մէջ անմահացած են արդէն:

ՀՅԴ գաղափարաբանութեան հիմնական տարրը ազատութիւնն է, մարդ անհատին եւ ազգային մեր հաւաքականութեան ազատ գոյատեւելու իրաւունքը: Ազատութենէն կը ծնին գաղափարաբանութեան մնացեալ տարրերը անկասկած:

Այդ ազատութեան մէջ է որ կը ծաղկի միտքը, կը զարգանայ քաղաքակրթութիւնը, կը ստեղծագործէ մարդը: Հաւաքականութեան մը ընկերատնտեսական եւ քաղաքական ազատութիւնը եւս հիմքը կը կազմեն անոր զարգացման: Այս իսկ պատճառով մեր երկիրը աշխարհակալութիւններու ազդեցութենէն առաւելագոյնս զերծ պահելու եւ անոր ինքնօրոյն զարգացման բացարձակ եղանակը հաստատելու մարտնչումը պէտք է ըլլայ նաեւ ազատութեան համար մղուող պայքարին առաջնային նպատակը:

Մարդուն, քաղաքացիին հիմնական ազատութիւններուն կաշկանդումը ոչ միայն կը դանդաղեցնէ, այլեւ կը խամրեցնէ անոր յառաջընթացը, հետեւաբար նաեւ երկրին ու ազգին զարգացումը:

Ու եթէ չտքնիք պահպանելու այդ ազատութիւնը ամէն մակարդակներու վրայ, մեր գործով չստեղծենք ազատ զարգանալու եղանակը, ուրեմն թերացած ենք ազատութիւն հասկացութիւնը լիարժէքօրէն ըմբռնելու իմաստով:

Քաղաքական կեանքի մէջ եւս պէտք է պաշտպանել ազատ գործելու եւ արտայայտուելու իրաւունքը ու չտարուիլ մերթ ընդ մերթ գլուխ ցող ճնշումներով:

Երկրորդ կարեւոր հրամայականը ազգային մեր արժէքներու պահպանումն է, այլ խօսքով՝ այդ արժէքներով սնանող երիտասարդութեան ներգրաւումն է:

Ներկայ աշխարհակալութիւնները կը ձգտին ամէն գնով պարպել ազգերը իրենց եւութենէն, իրենց արժէքներէն, դիրքաւ տիրելու անոնց ազգային հարստութեան ու տարածելու իրենց ըմբռնումները, իրենց մշակոյթն ու արժէքները, ապա նաեւ իշխելու ոչ թէ սոսկ հողին, հարստութեան, այլ մարդուն ու անոր մտքին:

Դաշնակցութեան օրուան յիշատակումը պէտք է դառնայ այսպիսի արժէքներու առնչուած երիտասարդութեան ազգային կեանքի մէջ ներգրաւման նոր մեկնարկ մը, թարմ ուժերով համալրելու ՀՅԴ շարքերը ու ժամանակակից գաղափարներու դրօշակիր երիտասարդներուն առջեւ լայն բանալու կուսակցական գործի դաշտը:

Այս բոլորը պատգամներով, լոկ խօսքերով կարելի չէ պահպանել: Գործի լծուելու հրամայականով պէտք է իմաստաւորել տօնի, յիշատակումի իւրաքանչիւր առիթ, ներքին եւ հրապարակային քննարկումներուն դաշտը բաց պահելով:

«Գ.»

-Զորքեշաբթի, 11 Դեկտեմբեր 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Ասթանայի հովանաւոր պետութիւնները՝ Ռուսիա, Իրան եւ Թուրքիա Ղազախստանի մայրաքաղաք Նուրսուլթանի մէջ տեղի ունեցած Ասթանայի 14-րդ նիստի աւարտին հանդէս եկած են հաղորդագրութեամբ, որուն մէջ վերահաստատած են Սուրիոյ ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանման եւ ՄԱԿ-ի սկզբունքները յարգելու անհրաժեշտութիւնը, մինչեւ Սուրիոյ ամբողջական ազատագրումը եւ



զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն ոչնչացումը:

Երեք պետութիւնները կտրականապէս մերժած են սուրիական քարիւղի դաշտերուն ապօրինի բռնագրաւումը եւ շեշտած են, որ անոնք ուշ կամ կանուխ պէտք է Սուրիոյ կառավարութեան վերահսկողութեան անցնին:

Անոնք խստիւ դատապարտած են սուրիական հողերուն վրայ իրայեւեան իրարայաջորդ յարձակումները, որոնք կը խախտեն միջազգային ու մարդկային օրէնքները եւ ողջ տարածաշրջանը վտանգի կ'ենթարկեն:

Աւարտին անոնք համաձայնած են յառաջիկայ նիստը գումարել Մարտ 2020-ին:

-ՍԱՆԱ հաղորդեց, որ սուրիական բանակին շնորհիւ, Զորքեշաբթի, 11 Դեկտեմբեր 2019-ին, տեղի ունեցած է Հալեպ-Հասիէ միջազգային մայրճամբուն բացումը:



Ճամբան կ'անցնի Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջաններէն՝ երկրին հիւսարեւելեան բաժինը միացնելով արեւմտեանին՝ իրաքեան սահմանէն հասնելով Գամիշլի, Հասիէ, Թալ Թամր, ապա Ռաքբայի Այն Իսա գիւղ եւ վերջապէս Մուսայուն եւ Հալեպ:

-Զորքեշաբթի, 11 Դեկտեմբեր 2019-ին, «Շամ Թայմ» հաղորդեց, որ սուրիական բանակը Համայի հիւսիսարեւմտեան Ֆրէյքէ գիւղին մէջ ինքնաթիռ մը վար առած է:



Աղբիւրը յայտնեց, որ ինքնաթիռը թռիչք առած էր Իտալիայի արուարձանին մէջ կայք հաստատած զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն կեդրոնէն, սակայն սուրիական բանակի հակաօդային պաշտպանութեան համակարգերը անմիջապէս վար առած են զայն:

«Շամ Թայմ»-ի թղթակիցը անելցուց, որ ինքնաթիռը ռումբերով եւ պայթուցիկ ականներով բռնաւորուած էր, թիրախ ունենալով ապահով բնակչութիւնն ու սուրիական բանակի միաւորները:

-Երկուշաբթի, 9 Դեկտեմբեր 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Հալեպի արեւմտեան շրջանին մէջ կայք հաստատած զինեալ ահաբեկչական խմբաւորումներ բազմաթիւ հրթիռներ արձակած են Մընեան գիւղին ուղղութեամբ, արձանագրուած են 2 զոհ, 2 վիրաւոր եւ նիւթական վնասներ:



# Լուրեր Հայաշխարհին

## ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆ. «ԳԿԱՅ ՀՅԴ-Ի ԶԻՆ ՈՒՆՈՐ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ»

Վերջին օրերուն իրար յաջորդող իրադարձություններու, Դաշնակցութեան շուրջ տեղի ունեցող զարգացումներու, ինչպէս նաեւ անցնող շաբաթավերջին Յայաստանի մէջ



20-է աւելի երկիրներու դաշնակցական ուսանողական եւ երիտասարդական միութիւններու ներկայացուցիչներու հաւաքէն ետք, «Երկիր Մետիա» պատկերասփիւռի կայանը զրոյց ունեցած է ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեանի հետ:

Չրուցավար Գեղամ Մանուկեան հարցուցած է այս անգամուան այցելութեան նպատակին մասին. պատասխանելով ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը ըսած է. «Այցելութեան հիմնական նպատակը կարելի է բաժնել երեք մասի: Առաջինը ՀՅԴ երիտասարդական-ուսանողական միութիւններու խորհրդաժողովն է, որ տեղի ունեցաւ եւ արդէն իսկ իրենց հարողորդութիւնը հրապարակուած է: Երկրորդը, Յայաստանի մէջ հանդիպումներու նպատակն է, որ բնականաբար տեղի կ'ունենայ պարբերաբար: Երրորդ՝ Արցախի մէջ Արտակարգ շրջանային ժողովին մասնակցութիւնն է, որովհետեւ, ինչպէս գիտէք, մեր կազմակերպութիւնը եւս պէտք է ճշդէյառաջիկայ գարնան տեղի ունենալիք նախագահական ընտրութիւններու ռազմավարութիւնը: Այս երեք հիմնական պատճառներով է, որ կը գտնուիմ հայրենիքի մէջ, եւ այո՛, կեանքիս մեծ մասը հիմա կ'անցընեմ հայրենիքի մէջ՝ Յայաստան ըլլայ, թէ Արցախ»:

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը անդրադարձած է դաշնակցական երիտասարդներու խորհրդաժողովին, ուր 22 երկիրներէ հաւաքուած էին ուսանողական-երիտասարդական միութիւններու ներկայացուցիչներ: Ան ընդգծեց, որ երեւոյթը ուրախալի է: Ուրախալի է յատկապէս այն երեւոյթը, որ ՀՅ Դաշնակցութիւնը յաջողած է այդ երիտասարդութեան մէջ կերտել հայու այն կերպարը, որ անկախ իր բնակութեան երկրի վայրէն, յստակօրէն կը դրսեւորէ մէկ ազգ եւ մէկ դատ ունեցող նուիրեալ եւ յանձնառու հայու նկարագիրը: Ուրախալի է, որ այդ բազմաթիւ երկիրներէն եկած երիտասարդները հիմնական հարցերու շուրջ որեւէ տարակարծութիւն չունեցան:

Անդրադառնալով Յայաստանի իշխանութիւններուն վերջին օրերու յայտարարութիւններուն՝ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը ըսաւ. «Անգամ մը եւս կը նշեմ, որ Յայ Յեղա-

փոխական Դաշնակցութեան մէջ չկան ներսի եւ դուրսի դաշնակցականներ, չկայ հին ու նոր ղեկավարութիւն, եւ այն պահանջները, որ նոր ղեկավարութիւնը հինը քննադատէ եւ արժանի գնահատականը տայ, մեզի համար անընդունելի է եւ տարօրինակ»:

## ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱԶԻՆ ՈՒՂԵՐՉԸ՝ ԼՂՀ ԴԵՏԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՔՈՒԷԻ ԵՒ ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Նախագահ Բակո Սահակեան 10 Դեկտեմբերին շտրիաւորական ուղերձ յղած է ԼՂՀ պետական անկախութեան հանրաքուէին եւ Սահմանադրութեան օրուան առիթով:



Ուղերձին մէջ յիշուած է. «Սիրելի՛ արցախցիներ, Հանրապետութեան իշխանութիւնները եւ անձամբ իմ անունից ի սրտէ շտրիաւորում եմ պետական կարեւորագոյն տօնի՝ ԼՂՀ պետական անկախութեան մասին հանրաքուէի եւ Սահմանադրութեան օրուայ առթիւ:

Թէ՛ 1991 թուականին եւ թէ՛ 2006 թուականին այս օրը մեր ժողովուրդը կատարեց պատմական ընտրութիւն՝ իր ձայնը տալով՝ յանուն ազատ ու անկախ Արցախի, յանուն ժողովրդավարական, իրաւական ու սոցիալական (ընկերակարական «Գ.») պետութիւն կառուցելու անսասան որոշման:


Մեր պետականաշինութեան ճանապարհին կարեւոր քայլ էր երկրի հիմնական օրէնքի՝ Սահմանադրութեան ընդունումը, որի հիմքում մարդն է, նրա իրաւունքների, ազատութիւնների ու շահերի պաշտպանութիւնը: Սրանք համամարդկային արժեքներ են, որոնք կարեւոր են քաղաքացիական հասարակութեան ու ժողովրդավարական ինստիտուտների կայացման համար:

Եւ արդէն 28 տարի է՝ մենք ընթանում ենք այս ճանապարհով՝ օր օրի գարգացնելով ու զօրացնելով մեր երկիրը, ամրապնդելով պետականութեան հիմքերն ու ժողովրդի անվտանգութիւնը, բարելաւելով մարդկանց կենսապայմանները: Սա բարդ ու անհարթ ճանապարհ է, որը մեր ժողովուրդն անցնում է պատուով ու արժանապատուութեամբ՝ անձնուիրաբար յաղթահարելով բոլոր դժուարութիւններն ու փորձութիւնները:

Թանկագին հայրենակիցներ, Մէկ անգամ եւս շտրիաւորում եմ բոլորիս այս նշանակալի տօնի կապակցութեամբ եւ մաղթում խաղաղութիւն, քաջամտ ընտրութիւն, մեծագոյն յաջողութիւններ՝ ի փառս Արցախի Հանրապետութեան ու մեր ժողովրդի»:

**Արցախի Հանրապետութեան Նախագահի Աշխատակազմի Տեղեկատուութեան Գլխավոր Կարգիւթիւն**

## ԱՐՄԷՆ ՍԱՐԳՍԵԱՆ ՈՒ ՉՕՂՐԱՊ ՄԵԱՅԱԿԱՆԵԱՆ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԲԱՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՌՆՉՈՒՂ ՀԱՐՅԵՐ



«Արմենիքիւս».- Յայաստանի Հանրապետութեան նախագահ Արմեն Սարգսեան աշխատանքային հերթական հանդիպում ունեցած է ՀՀ արտաքին գործոց նախարար Չօհրապ Մսացականեանի հետ:

Հանդիպումին ընթացքին անդրադարձ կատարուած է Հայաստանի արտաքին քաղաքականութեան առնչուող հարցերուն:

## 2020-Ը ՅԱՏՈՒԿ ԽՆԱՄՔԻ ԿԱՐՕՏ ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒՍԱՐԻ

Այսու կ'ուզենք մեր ժողովուրդի գաւազներուն ուշադրութեան յանձնել, թէ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս, իր որդեգրած ավանդութեան համաձայն, յառաջիկայ տարին՝ 2020-ը հռչակեց յատուկ ինսամքի կարօտ հայորդիներու տարի:



Հաշմանդամներու նուիրուած Վեհափառ Հայրապետին պատգամը պիտի կարդացուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Կիրակի, 12 Յունուարին, յընթացս Սուրբ եւ անմահ պատարագին. եւ ապա՝ մեր թեմերու բոլոր եկեղեցիներուն մէջ:

Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը 2003-էն ի վեր իւրաքանչիւր տարի մեր ժողովուրդի կեանքին հետ անմիջական աղերս ունեցող արժէք մը կամ երեւոյթ մը լուսարձակի տակ բերած է: Նորին Սրբութեան պատգամի լոյսին տակ այդ թեմաները ամբողջ տարուան ընթացքին քննարկումի կիւթ դարձած են մեր եկեղեցիներուն եւ ազգային կառոյցներու ու միութիւններու կազմակերպած ձեռնարկներով: Ան ի յիշեցում, անցնող 16 տարիներու հռչակումները.-

- «2003-ը՝ Աստուածաշունչի Տարի»
- «2004-ը՝ Հայ Ընտանիքի Տարի»
- «2005-ը՝ Ազգային Պահանջատիրութեան Տարի»
- «2006-ը՝ Հայ Դպրոցի Տարի»
- «2007-ը՝ Հայ Լեզուի Տարի»
- «2008-ը՝ Զրիստոնէական Դաստիարակութեան Տարի»
- «2009-ը՝ Երիտասարդութեան Տարի»
- «2010-ը՝ Հայ Կնոջ Տարի»
- «2011-ը՝ Հայ Մանուկի Տարի»
- «2012-ը՝ Հայ Գիրքի Տարի»
- «2013-ը՝ Հայ Մօր Տարի»
- «2014-ը՝ Տարեցներու Տարի»
- «2015-ը՝ 100-ամեակ Հայոց Ցեղասպանութեան (Կոնդակ)»
- «2016-ը՝ Ծառայութեան Տարի»
- «2017-ը՝ Վերանորոգման Տարի»
- «2018-ը՝ 100-ամեակ Հայաստանի Հանրապետութեան»
- «2019-ը՝ Հայ Մամուլի Տարի»

## ԶԱՐՄԻԿ ՊՕՂԻԿԵԱՆ. «ՑԱՆԿԱԼԻ Է ՄԻԱՄՆԱԿԱՆ ՃԻԳԵՐՈՎ ԱՄՐԱՊՆԴԵԼ ՄԵՐ ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ, ՆԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ, ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ ԴԱՍԵՐ ՔԱՂԵԼՈՎ ՆԱՅԻԼ ԱՊԱԳԱՅԻՆ, ՈՐՊԵՍՉԻ ՆԱՅՈՒԹԵԱՆ ՆԱՄԸՆԴՆԱՆՈՒՐ ՃԻԳԵՐՈՒ ՄԵԿՏԵՂՈՒՄՈՎ ՆՈՐ ԹԱՓ ՍՏԱՆԱՅ ՄԵՐ ԵՐԿՐԻՆ ՅԱՌԱՋԸՆԹԱՅԸ»

**Հալեայի մեջ ԳՅԴ 129-ամեակի հանդիսության բանախօսությունը՝ արտասանուած «Գանձասար» խմբագիր Չարմիկ Պօղիկեանի կողմէ:**

129 տարուան եռուն կեանք ունեցած, պայքարի տարողունակ խրամատներէ անցած, իր նուիրեալներու արեամբ հայրենիք կերտած, խաղաղասեր, ստեղծագործ ու աշխատունակ իր ժողովուրդին իրաւունքներուն համար աշխարհով մէկ պայքարի դրօշ պարզած կուսակցութեան մը յորձեւանքի յիշատակումը յարգանքի տուրք մատուցելէն շատ աւելին կը պատգամէ մեր բոլորին:

Այո՛, բոլորին, որովհետեւ դաշնակցական ըլլալ սոսկ կուսակցութեան մը շարքերուն պատկանիլ չի նշանակեր, Դաշնակցութիւնը ապրում է, հայրենիքի համար բաբախող սիրտ է, հայ մշակին, բանուորին, մտաւորականին, քաղաքական գործիչին, երիտասարդին եւ ուսանողին համահունչ պայքարին տրուած է, որ հայօրէն բաբախող իւրաքանչիւր սրտի գարկին հետ նոր աւիւն կը ստանայ:

129 տարի ապրիլն ու գործելը ինքնին կը խօսին նպատակասլաց գործունէութեան եւ մշտանորոգ կեանքի մը մասին, կեանք մը, որ մշտապէս կը սնանի մեր ժողովուրդին ազգային արժէքներու պահպանման եւ Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի կերտման գաղափարով:

Դաշնակցութեան հիմնադիրները նախ եւ առաջ մտքի ռահվիրաներ էին, անոնք մեր ժողովուրդը ստրկամտութեան կապանքներէն ձերբազատելու համար հաղորդակից եղան ազատատենչ գաղափարներու, ապա այդ գաղափարներուն կեանք տուին ու ծնաւ գործը: Անոնք Յեղափոխութեան դրօշին ներքեւ համախմբեցին ժողովուրդը ու անոր ազատագրական պայքարը առաջնորդեցին:

Հարթ չէրաւ Դաշնակցութեան ճամբան: Ազատագրական պայքարի փուլերէն մինչեւ անկախ հայրենիքի կերտում ու պետականութեան ձեւաւորում, ներքին կազմակերպական կեանքի բիւրեղացումէն մինչեւ ապստամբութիւն բռնակալ վարչակարգերու դէմ, Սփիւռքի ձեւաւորումէն, հայ երիտասարդութեան քաղաքականացումէն ու յեղափոխականացումէն մինչեւ Հայ Դատին ու հայոց պահանջատիրութեան հետապնդում բազմակողմանի ճակատներու վրայ:

Հայաստանի խորհրդայնացումով Դաշնակցութիւնը իր հայրենիքէն դուրս գալով պետական մտածողութեամբ ու փորձառութեամբ գործեց Սփիւռքի մէջ, հիմնելով ու զարգացնելով բոլոր այն կառոյցները, որոնք սփիւռքահայութիւնը պիտի դարձնէին կազմակերպ ուժ, շարունակելով հայապահպանման իր առաքելութիւնը, Հայաստանէն

դուրս փոքրիկ Հայաստան մը հիմնելով իւրաքանչիւր հայու սրտին, հոգիին ու գիտակցութեան մէջ ու մատուցելով պէս փայփայելով հայոց պետականութեան խորհրդանշանները՝ եռագոյն դրօշը, քայլերգն ու զինանշանը:

Դաշնակցութեան ուժի հիմնական աղբիւրը իր շարքերուն հաւատքն էր հայ ժողովուրդի տեսիլքին իրականացման հանդէպ, ազգային մեր արժէքներուն հանդէպ: Երկրորդ ուժի աղբիւրը իր գաղափարաբանութիւնն էր՝ ազատութեան, անկախութեան, ժողովրդավարութեան, ընկերակցութեան եւ յեղափոխութեան հիմնասիւններով:

Դաշնակցութիւնը հաւատքը գործով արտայայտեց ու ցնծութեամբ տօնեց շատ մը թերահաւատներու կողմէ անկարելի համարուող Հայաստանի վերանկախացումն ու Արցախի ազատագրումը: Գերոգ Չաւուշներու, Մերոք Աղբիւրներու, Արամ Մանուկեաններու հաւատարիմ ժառանգորդները այս անգամ պայքարի դաշտի վրայ պիտի յայտնուէին հայ ժողովուրդի գաւակներուն կողքին, որպէս Թաթուլ կրպետներ, Շահէն Մեղրեաններ եւ Պետոներ ու Նոյն գաղափարներով ներշնչուած, Դաշնակցութեան դրօշին տակ պիտի կռուէին ու գոհուէին յանուն համագային ճիգերով նուաճելի ազատութեան:

Դաշնակցութիւնը Վերընձիւղուելով Հայաստանի մէջ, պայքարեցաւ անկախ ու ինքնիշխան հայրենիքին զարգացման համար:

Դեպի երկիր կարգախօսով սփիւռքահայութեան ներուժը ուղղեց հայրենիք, հայրենի մեր երկիրը մեր բոլորին մասնակցութեամբ ծաղկած տեսելու հեռանկարով: Հայ Դատի իր գրասենեակներուն ճամբով եւ աւելի քան 30 երկիրներու մէջ գործող իր կառոյցներով Հայաստանի ու Արցախի շահերուն պաշտպանը հանդիսացաւ:

Հայրենիքի մէջ վերընձիւղուելով մերթ քան մերթ գործակցեցաւ տարբեր իշխանութիւններու հետ, յաճախ ալ գործեց որպէս ընդդիմութիւն, միշտ սրբագրելու նպատակով մատնացոյց ընելով թերութիւնները ու լուծումներ առաջարկելով: Իշխանութիւններու հետ գործակցութեան որպէս արդիւնք բարեփոխուեցաւ Հայաստանի սահմանադրութիւնը, ձեւաւորուեցաւ երկքաղաքացիութեան օրէնքը, անցում կատարուեցաւ դեպի երկրի կառավարման խորհրդարանական համակարգ, եւ հայ թրքական տիրապետչական արձանագրութեան դէմ համահայկական բողոքի ալիք բարձրացաւ եւ այդ արձանագրութիւնները յետոյ կոչուեցան:

Այս տարողունակ աշխատանքներուն ընթացքին բնականաբար ունեցաւ բացթողումներ, գործի շարքերուն մէջ տիրող ազատ խօսքին եւ կառուցողական քննարկումներուն ճամբով սրբագրեց:

Այս բոլորը պատկուով չհանդիսացան տակաւին Դաշնակցութեան հեռահար նպատակներուն:

Այո՛, այս տարիներու ընթացքին մեր ժողովուրդը ունեցաւ յոյս ներշնչող ձեռքբերումներ՝

Ունեցանք երկու անկախ հանրապետութիւն,

Մեր պետութիւնը անցած է բարդ ու դժուար ուղիէ, ու թէեւ յաղթահարած է շարք մը մարտահրաւերներ, սակայն անհրաժեշտ է այս առիթով մատնանշել երեւելի ախտեր, որոնք յաղթահարելի կրնան ըլլալ միայն քաղաքական կամքի եւ միասնական աշխատանքի մշակոյթի գոյութեան պարագային:



Հայաստանը նուաճեց իր պատկառելի դիրքը միջազգային ընտանիքին մէջ:

Հայաստանի Հանրապետութիւնը յառաջընթաց ապրեցաւ, ունենալով քաջարի բանակ, տնտեսական որոշակի յառաջընթաց ու տարբեր ոլորտներու մէջ արձանագրեց նկատառելի զարգացում:

Տասը միլիոնի հասնող Սփիւռքը ազդեցիկ ներկայութիւն շարունակեց մալ տարբեր երկիրներու մէջ եւ իր ներքին մարտահրաւերներու դիմագրամման կողքին հայեացքը ուղղեց դեպի հայրենիք:

Հայոց Յեղասպանութեան ճանաչման ու հատուցման գծով համահայկական կեցուածք որդեգրուեցաւ:

Այս բոլորը դրական ներգործութիւն ունեցան ոչ միայն հայրենի այլեւ սփիւռքահայ զանգուածներուն վրայ: Փաստօրէն սուրիական պատերազմի տարիներուն աւելի քան 20000 սուրիահայեր հաստատուեցան Հայաստան եւ Հայաստանի իսկ ղեկավար ղեմքերուն վկայութեամբ դրականօրէն համարուեցան հայաստանեան միջավայրին մէջ:

Այդ տարիներուն, Հայաստան Սուրիական պատերազմի որջ տեւողութեան կառուցողական դիրքերէ հանդէս եկաւ ու օգնութեան ձեռք երկարեց Սուրիոյ եւ սուրիահայութեան: Հայաստանի Հիւպատոսութիւնն ու Դեսպանութիւնը եղան միակ դիւանագիտական ներկայացուցչութիւնները, որոնք չփակեցին իրենց դռները, իսկ վերջին մէկուկէս տարուան ընթացքին յատկապէս ընդգծելի եղաւ ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան մարդասիրական օժանդակութեան նախաձեռնութիւնը ու մեր երկիրը աշխարհին ներկայացաւ որպէս խաղաղութիւն արտահանող երկիր:

2018-ի ժողովրդային շարժումով նոր էջ բացուեցաւ հայրենի մեր ժողովուրդին դիմաց: Ժողովուրդը պահանջեց արդար հասարակարգի ձեւաւորում, տնտեսապէս հզօր ու ապահով երկրի մը նախադրեալներու հաստատում:

Դաշնակցութիւնը եւս, ընդառաջելով վարչապետի առաջարկին, պատրաստակամութիւն յայտնեց գործակցելու նոր ձեւաւորուած իշխանութեան հետ եւ նպաստելու երկրի անցնում զարգացման գործընթացին: Սակայն, ցաւ ի սիրտ, հասարակութիւնը դեպի բեւեռացում առաջնորդող դրսեւորումներ երեւան եկան, սեւի ու սպիտակի, յեղափոխականներու եւ հակափոխափոխականներու բաժնելով մեր հասարակութիւնը:

Իշխանութիւնները ազգային միասնական օրակարգ ձեւաւորելու փոխարէն, երկրի զարգացման նպաստող հայեցակարգային ծրագրի բացակայութեան, անցեալի սխալները տեղ-տեղ կրկնելու սկսան:

Այս բոլորին կողքին պոլիտիկա միակուսներէն սնուած հակադաշնակցական պայքարը կրկին գլուխ ցցեց, ապականելով երկրի քաղաքական կեանքը:

Հաւատալով մեր երկրէն ներս առողջ երկխօսութեան մշակոյթին, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը քանիցս յայտնեց իր տեսակէտները երկրի անցնում զարգացման ու անվտանգութեան պահպանման առումներով:

Հայաստանի ԳՄ-ը յառաջացուց ոլորտային մասնագիտական յանձնախումբեր, որոնք միջոցաւ պարբերաբար իրապարակուեցաւ ու կը իրապարակուի կուսակցութեան կեցուածքը երկրի զարգացման եւ

## ՀԱՊՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՀՅՂ ԲԻՒՐՈՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻ

Կազմակերպությամբ ՀՀ Բիւրոյի Երիտասարդական գրասենեակին, 5-7 Դեկտեմբեր 2019-ին, Երեւանի «Արամ Մանուկեան» կեդրոնէն ներս, ՀՀ Երիտասարդական Ուսանողական 27 միութիւններու մասնակցութեամբ գումարուած եռօրեայ համահայկական խորհրդաժողովը աւարտեց իր աշխատանքները:

Միութեան երկրի քաղաքական դաշտին վրայ իրականացուցած աշխատանքները՝ լաւագոյն ապացոյցներն են այս ուղղութեամբ:

Արցախեան ազատագրական պայքարի յաղթական աւարտը ազգերու ինքնորոշման իրաւունքի ծիրէն ներս, Հայաստանի եւ հայութեան իտեալներու իրականացման նախապայմանն է: ՀՀ Երիտա-

տանքներու պաշտպանութեան, ինչպէս նաեւ՝ օժանդակելը որպէսզի ջաւախահայութեան ընդհանրապէս եւ անոր երիտասարդութեան մասնաւորապէս ծաւալած աշխատանքները նոր թափ ստանան:

Հիմնուելով նախադրեալ ռազմավարական ուղղութիւններուն վրայ՝ խորհրդաժողովը նաեւ հանգամանօրէն անդրադարձաւ ՀՀ

իրականացումին մէջ էական բաժին ունի:

Դ.Պատրաստել քաղաքական-յարաբերական գործի ատակ մարդուժ եւ կազմաւորել միջազգային ու տեղական քաղաքական-յարաբերական աշխատանքներու մէջ հմտութիւն ունեցող երիտասարդներ: Բարձրացնել նաեւ համաշխարհային երիտասարդական հարթակէ-



Խորհրդաժողովին հիմնական նպատակն էր քննել եւ հաստատել երիտասարդական-ուսանողական միութիւններու վերամշակուած հայեցակարգը, ռազմավարութիւնն ու գործառնությունները:

Խորհրդաժողովը իր օրակարգերուն վրայ քննարկեց Հայաստանի, Արցախի, Ջաւախքի եւ Սփիւռքի երիտասարդութեան առնչուած հարցերը եւ կատարեց հետեւեալ հաստատումները:

Հայաստանի ներկայ իրավիճակը կը յատկանշուի ներքին եւ արտաքին ճակատներու վրայ ի յայտ եկող բազմաթիւ գարգացումներով եւ մարտահրաւերներով: ՀՀ Երիտասարդական եւ Ուսանողական Միութիւնները յանձնառու են հզօր, ժողովրդավար, ընկերվար եւ ազգային արժեքներ կրող հայրենի պետականութեան կերտման գործին:

Այս ծիրէն ներս ՀՀ Երիտասարդական եւ Ուսանողական Միութիւնները շեշտը պիտի դնեն ընկերվարական բնոյթի ծրագիրներուն, ընկերային արդարութեան, բնապահպանական եւ այլ ընկերատնտեսական բնոյթի հարցերու վրայ:

Խոր մտահոգութիւն յայտնելով Հայաստանի ներքաղաքական իրավիճակին առնչութեամբ, ժողովը հաստատեց, որ այս նպատակներու հետապնդումը ներկայ հակադաշնակցական պայքարի պայմաններուն մէջ առաւել լարումով կ'ընթանայ: Անցնող շաբաթներուն ՀՀ Հայաստանի Երիտասարդական

սարդութիւնը իր անվերապահ մասնակցութիւնը կը բերէ այդ պայքարի յառաջընթացի բոլոր ոլորտներէն ներս:

Թրքական պետութեան կողմէ մեր արդար իրաւունքներու հատուցման հարցը պիտի շարունակէ իշխող մտայն հայ երիտասարդութեան օրակարգին վրայ: Պիտի մղելք երիտասարդութիւնը, որպէսզի Արեւմտահայաստանը ոչ միայն մեր պատմական հայրենիքը համարէ, այլեւ գրաւուած հայրենիքը, որուն ազատագրման նկատմամբ հաւատքը պիտի մնայ աներեր: Այս շրջափոխէն ներս կարեւոր վերաբերմունքի պիտի արժանանայ 1920-ին կնքուած Սեւրի դաշնագրին եւ ԱՄՆի նախագահ Ռիչարդսի իրաւարարական վճռին հարիւրամեակի նշումը 2020-ին:

ՀՀ Երիտասարդական միւլտիլտրալ յանձնառու են հայակերտման միտուած ճիգերով՝ նպաստելու Սփիւռքի համայնքներու հզօրացման: Երիտասարդութեան կողմէ ի գործ պիտի դրուին ջանքեր, որպէսզի Սփիւռքի վերակենսաւորման օրակարգը դառնայ տիրական: Յատուկ ուշադրութեան արժանի է Միջին Արեւելքի հայ երիտասարդութիւնը, որ տարածաշրջանի դժոխակ պայմաններուն բերումով կը դիմագրաւէ մեծածաւալ մարտահրաւերներ:

Ջաւախքի հայեցի դիմագիծը պահպանելու համար պարտինք սատարել ջաւախահայութեան անհատական ու հաւաքական իրա-

Երիտասարդական Գրասենեակի կողմէ պատրաստուած դաստիարակչական, «Դէպի Երկիր», ուսանողական, արտաքին յարաբերական եւ քարոզչական ոլորտներու վերաբերող ծրագիրներուն:

Խորհրդաժողովը հաստատեց հետեւեալ կէտերը:

ա. Շեշտը դնել գաղափարական, քաղաքականացած, կարգապահ եւ քննական միտք ունեցող երիտասարդութիւն պատրաստելու վրայ: Ժողովը յայտնեց իր ընդվզումը ՀՀ Նիկոլ Աղբալեան Ուսանողական Միութեան կարգ մը նախկին անդամներու անկարգապահ եւ կասկածելի ընթացքին համար, որ խոտոր կը համեմատի մեր ամրապինդ կառուցիչ գաղափարական հիմքերուն հետ:

բ. Ստեղծել յաւելեալ առիթներ, որպէսզի ՀՀ Երիտասարդութիւնը Հայաստանի, Արցախի, Արեւմտահայաստանի եւ Ջաւախքի մէջ գանազան տեսակի աշխատանքներ, ուխտագնացութիւններ, գործուղումներ, համախմբումներ եւ վարժողական ծրագիրներ իրականացնէ:

գ. Վերահաստատել ՀՀ Ուսանողական միութիւններուն համալսարանական շրջանակներու մէջ ՀՀ քաղաքական նպատակները ներկայացնողի եւ կուսակցութեան համար մտաւոր ներհոսք ապահովողի կարեւոր դերերը: Զաջ գիտակցելով որ յառաջադէմ ուսանողութեան համախմբողի առաքելութիւնը ազգային նպատակներու

րու վրայ Հայ Դատը եւ միջազգային այժմեական հիմնախնդիրներ (մարդկային տարրական իրաւունքներու ոտնակոխում, ընկերային անհաւասարութիւն, կանանց նկատմամբ անիրաւութիւն, կենսոլորտի ապականում, բնական հարստութիւններու անհաւասար բաշխում, աղքատութեան դէմ պայքար):

ե. Ճիշդ օգտագործել գանազուածային լրատուամիջոցներն ու ընկերային ցանցերը որպէս կարեւոր միջոց ՀՀ Երիտասարդականի եւ ուսանողականի նպատակներն ու գործունեութիւնը երիտասարդութեան ներկայացնելու համար: ՀՀ Երիտասարդականն ու ուսանողականը ամեն ջանք պետք է գործադրեն կուսակցութեան որոշումներուն համահունչ արդիական, գրաւիչ, հետեւողական ու ներգործող քարոզչութիւն կատարելու համար:

Երեք օրերու ընթացքին 18 երկիրներէ հայրենիք ժամանած երիտասարդները վերոնշեալ քննարկումներու եւ հաստատումներու կողքին՝ ներկայացուցին իրենց աշխատանքային գեկոյցները, փոխանակեցին իրենց փորձառութիւնները եւ գիրքը միացնող գաղափարական դաստիարակութեամբ ստեղծեցին ընկերական հարազատ մթնոլորտ, որուն ջերմութիւնը իրենց հետ պիտի տանին իրենց երկիրները:

ԵՐԵՒԱՆ,  
7 ԴԵՍԵՄԲԵՐ 2019  
ՀՀ ԲԻՒՐՈՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

### ԿԱՐՈ ՓԱՅՆԱՆ ԱՆԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ ԱՅՅԵՆԵՑ

Կարսի քաղաքապետարանի խորհուրդն ու Օսման Զավալայի «Անատոլու Քիլիթի» կեդրոնը համատեղ կազմակերպեցին «Քարի Ձօն՝ Անի» խորագրով ցուցահանդես մը, որու առիթով Անիի աւերակներ այցելեց ժողովուրդներու ժողովրդավար Կուսակցութիւն հայ երեսփոխան Կարո Փայլան:




Կարսի քաղաքապետարան եւ հանդիպում ունեցաւ կուսակից համայնքապետներուն հետ:

Անիի աւերակներ կատարած այցելութեան վերաբերեալ Փայլան գրառում մը ըրաւ դիմատետրի իր էջին վրայ, կցեալ գետեղելով նաեւ քանի մը լուսանկարներ: Կարո Փայլան գրեց հետեւեալը. «*Այցելեցիք Կարս, Անի քաղաք: Անին, հակառակ բոլոր ջանքերուն, տխուր է... Գետը, որ կը հոսի քաղաքի մօտէն, վերածեր են Թուրքիա-Հայաստան սահմանի: Սահմանը 26 տարի է վեր փակ է... Այն օրը, երբ պիտի վերակառուցենք այդ քանդուած կամուրջը, տօն պիտի ըլլայ Անի քաղաքին համար»:*

Փայլան նաեւ այցելեց

### ՔԱՅՆՍԸ ԵՄ ԴԵՊԻ ԺՆՏՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ. ԹՈՒՐԷՍԻ ԿԸ ՅԱՌԱՋԱՅՆԵ «1915.GOV.TR» ԿԱՅՔԸ

Էրմենիհապեր կը հաղորդէ, որ Թուրքիոյ նախագահական տեղեկատուական վարչութիւնը քայլ մը եւս առած է դէպի Հայոց Ցեղասպանութեան ժխտում՝ ստեղծելով «1915.gov.tr» անունով անգլերէն կայք մը: Կայքին նպատակն է պայքարիլ Հայոց Ցեղասպանութեան իրողութեան հաստատման դէմ:



Կայքին մէջ Հայոց Ցեղասպանութեան ժխտման թրջական պետութեան դեգերը կը ներկայացուին:

### «Քրիստափոր» գրադարանի սիրելի՛ բարեկամներ եւ ընկերներ

Ապաւինելով ձեր ազնութեան կը դիմենք ձեզի. բոլոր անոնք, որոնք ունին գրադարանիս կապակցաբար տեղեկութիւններ, յիշատակներ կամ դրուագներ, ըլլան անհատական կամ կազմակերպչական մակարդակով, կը խնդրենք փոխանցել մեզի գրաւոր կամ բերանացի, յիշելով նաեւ ձեր անունը եւ հանգամանքը՝ ըստ կարելոյն:

Ձեր բոլոր փոխանցածները հնարաւոր է որ օգտագործուին հետագային՝ գրադարանիս պատմութեան համար:

Առ այդ, ընդունեցէք «Քրիստափոր» գրադարանի վարչութեան կանխայայտ շնորհակալութիւնները:

**Չերմօրէն՝**

**«Քրիստափոր» գրադարանի վարչութիւն:**

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Հալէպի Գործադիր Մարմինը Կրաստնոտարի Գործարարներու ուղարկած ալիւրի բաշխումը պիտի կատարէ Ուրբաթ, 13 Դեկտեմբեր 2019-ի առաւօտեան ժամը 9:00-էն սկսեալ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահին մէջ: Փափաքողները կրնան ներկայանալ եւ ստանալ իրենց բաժինը:

### ՍՈՒՐԻՈՅ ՆՈՒՐՈՒԱԾ ԵՐԵԿՈՅ ԻՆԾԱԿՕ ԲԱՂԱՔԻՆ ՄԷՋ-ԻՏԱԼԻԱ

Չորեքշաբթի, 4 Դեկտեմբեր 2019-ի երեկոյեան ժամը 9:00-ին, Միլանի մօտ Ինծակօ քաղաքի «St Անտրէ» մշակութային կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Սուրիոյ պատերազմին եւ փոքրամասնութիւններու իրավիճակին նուիրուած երեկոյ մը, որուն մասնակցեցաւ Հալէպի Միսիթարեան վարժարանի նախկին տեսուչ, Ս. Ղազար Միսիթարեան մայրավանքի պատասխանատու Հ. Համազասպ Վրդ. Բէշիշեան:

Հայր սուրբը լուսանկարներով ներկայացուց Սուրիոյ մէջ զինեալներու, ահաբեկիչներու գործած աւերը, թալանը, կողոպուտը եւ ջարդը, դժբախտաբար Շոցի եւ Արեւմուտքի որոշ երկիրներու մեկենասութեամբ եւ ի մասնաւորի Թուրքիոյ միջնորդութեամբ:

Ան լուսարձակի տակ առաւ Թուրքիոյ պետութեան յանցագործութիւնն ու բացասական դերը Սուրիոյ աւերումին, երկրի թալանին, ժողովուրդին դէմ ի գործ դրուած ոճիրներուն, երկիրը քրիստոնեաներէն ու հայերէն դատարկելուն, քիւրտերը իր սահմաններէն հեռացնելուն եւ իսլամական ծայրայեղութիւնը տարածելու գործընթացին մէջ, ապա ըսաւ, որ մեծ պետութիւններ, օգտագործելով ծայրայեղականները, զինեալներ արտածեցին դէպի Սուրիա, որպէսզի երկիրը պառակտեն եւ իրենց շահերը ապահովեն այդ տարածաշրջանին մէջ: Սուրիոյ բնակիչն է շուս պետութեան միջամտութեան շնորհիւ կարելի դարձաւ գրաւուած շրջաններու մեծ մասը ազատագրել զինեալներէն:

Հայր Բէշիշեան դիտել տուաւ, որ արեւմուտքի լրատումափոխոցները, պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի կայանները խեղաթիւրուած ձեւով ներկայացուցին լուրերը իրենց լսարանին, ուստի ժողովուրդը սխալ կարծիք կազմեց Սուրիոյ պատերազմին, երկրին, անոր ժողովուրդին եւ պետականութեան մասին:

Ան անդրադարձաւ նաեւ այն պատժամիջոցներուն, զոր Արեւմուտքը սահմանած է երկրին դէմ, ծայր աստիճան աղքատութեան մատնելով ժողովուրդին մեծամասնութիւնը:

Հայր Համազասպ խօսեցաւ Զեսապի վրայ զինեալներու յարձակման, ժողովուրդի տեղահանութեան, ապա Զեսապի ազատագրումին եւ բնակչութեան վերադարձին, վերականգնումի եւ գոյատեւման տքնաշան գործի մասին:

Ապա ըսաւ, որ ցաւօք դուրսէն հրահրուած պատերազմը Նօսրացուց Սուրիոյ քրիստոնեաներուն թիւը, նոյնպէս՝ հայերունը:

Վարդապետը իր մեկուկէս տարուան Հալէպի փորձառութիւնը պատմեց եւ ներկայացուց Հալէպի ժողովուրդը, հայ գաղութը, լուսարձակի տակ առնելով իրենց կրած



աներեւակայելի դժուարութիւններն ու նեղութիւնները, վտանգն ու սպառնալիքները, ապա իրենց կառուցածութիւնը, հաւատարմութիւնը եւ օրինակելի կեցուածքը երկրին հանդէպ: Ան մեծապէս գնահատեց Սուրիոյ համայնքապետներուն, կղերին, ազգային իշխանութիւններուն, մշակութային միութիւններուն եւ հաստատութիւններուն պատաս-



խանատուներուն, ինչպէս նաեւ հայ երիտասարդութեան նուիրումը՝ հաստատութիւնները պաշտպանելու, կրթական եւ մշակութային գործունէութիւնը վառ պահելու եւ նիւթապէս ու բարոյապէս զօրավիգ կանգնելու սուրիահայութեան ընդհանրապէս եւ հալէպահայութեան մասնաւորապէս:

Հայր սուրբը իր խօսքը եզրափակեց նախ ափսոսալով Եւրոպայի պետութիւններու անտարբերութեան Միջին Արեւելքի եւ քրիստոնեաներու կրած տառապանքին ու հալածանքին հանդէպ, կոչ ուղղելով դատապարտելու Սուրիոյ ներքին հարցերուն արտաքին միջամտութիւնը, հարցերը չդիտելու գուտ անձնական շահերէ մեկնելով, մտածելու Սուրիոյ ժողովուրդին անվտանգութեան ու ապագային մասին եւ գործելու խաղաղութեան վերահաստատման հեռանկարով:

# ՍԱՐԿԱԲԱԳՆԵՐՈՒ ՉԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐԱ

Տարիներու ընդհատումեն ետք, հալեպահայութիւնը հոգեպարար արարողութեամբ պատմական օր մը ապրեցաւ Բերիոյ Յայոց Թեմէն Ներս:

Կիրակի, 8 Դեկտեմբեր 2019-ի առաւօտեան, ձեռամբ՝ Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Ս. Մասիս Ս. Եպս. Չօպուեանի, խարտաւիչակութեամբ՝ Յոգեշնորհ Ս. Մանուկ Աբեղայ Պարիխանեանի, յընթացս Սուրբ Եւ Ամմահ Պատարագին տեղի ունեցաւ Յալեպի երեք եկեղեցիներէն 13 սարկաւազներու ձեռնադրութիւն, Սրբոց Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ, ներկայութեամբ՝ Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Վարչութեան Եւ Կրօնական Ժողովի ներկայացուցիչներուն,



Թեմի եկեղեցիներու Թաղական խորհուրդներուն, սարկաւազներու հարազատներուն Եւ հաւատացեալ ժողովուրդին:

Օրուան պատարագիչն էր՝ Արժ. Տ. Յուսիկ Ա. Զինյ. Սեդրակեան: Սուրբ Եւ Ամմահ Պատարագի ընթացքին սարկաւազութեան պաշտօն ստացան հետեւեալ 13 դպիրները,-



Սրբոց Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցիէն՝ Կարապետ Սարգիսեան, Վաչէ Գայթանճեան, Գերոզ Զիլ Աբօշեան, Արմէն Զահքեճեան Եւ Գերոզ Սեմերճեան:

Ս. Աստուածածին Եկեղեցիէն՝ Ռաֆֆի Զաքրեան, Սարգիս Կիւտալեան, Յովսէփ Արսլանեան Եւ Գերոզ Պերդուսեան:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիէն՝ Լեւոն Տէր Ներսեսեան, Յարութ Աղամեան, Գրիգոր Տէր Վարդանեան Եւ Կարօ Տէր Վարդանեան:

Առաջին հերթին ինը դպիրներ ստացան կիսասարկաւազութեան կոչումը: Անոնք ծնկաչոք խորան

բարձրացան Եւ Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութիւնները ստանալով խորհրդակցական կերպով

դին ծառայելով: Գործք Առաքելոց գիրքէն մէքերումներ կատարելով Սրբազան



իրենց յանձնուեցաւ քահանայի զգեստ, Պատարագի խորհրդատետր, սկիհ Եւ մաղմայ բռնելու իրաւունք, ապա ուրար ստանալով զայն կրեցին իրենց բազուկներուն վրայ:

Այնուհետեւ չորս կիսասարկաւազեր միանալով նոր ձեռնադրուողներուն՝ սարկաւազութեան պաշտօն ստացան: Անոնց յանձնուեցաւ Աւետարան Եւ բուրվառ, հետեւաբար ունեցան Աւետարան ընթերցելու, վերաբերում կատարելու Եւ խնկարկելու իրաւունք: Սարկաւազութեան պաշտօնը ստանձնելով ձեռնադրուողները իրենց ուրարները փոխադրեցին իրենց ուսերուն:

Իւրաքանչիւր սարկաւազ, խորհրդաւոր այս պահուն, բուրվառ ձեռքին, Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութիւնները ստացաւ Եւ ժողովուրդին դառնալով խնկարկեց:

Զարոգ խօսութեան ընդմէջէն Առաջնորդ Սրբազան Զայրոյ կարեւորութեամբ նշեց, թէ սարկաւազութեան պաշտօնը ծառայութեան իրաւեր մըն է: «Սարկաւազութիւնը հնազոյն տիտղոսներէն մէկն է, տրուած հաւատացեալներու այն խումբին, որոնք կը սպասարկէին՝ Աստուծոյ խօսքը քարոզելով Եւ ժողովուր-

Զայրոյ նշեց սարկաւազութեան կոչումին հետեւեալ անհրաժեշտ պայմանները,-

- 1-Զրիստոնէական հաւատքը պահպանել:
  - 2- Մաքուր խղճմտանք ունենալ:
  - 3- Բարի վկայութիւն բերել:
  - 4- Սուրբ Զոգիով լեցուիլ:
- Առաջնորդ Սրբազան Զայրոյ խօսքը ուղղելով ձեռնադրուած սարկաւազներուն շեշտեց, որ սովորական պաշտօնի կամ կոչումի մը չէ



որ արժանացան անոնք, այլ մեր ժողովուրդին ծառայելու Եւ եկեղեցիին ծաղկեցնելու յատուկ կոչում: Այնուհետեւ ան խօսքը ուղղելով հաւատացեալ ժողովուրդին յայտնեց, որ աղօթքով Եւ եկեղեցական արարողութիւններուն մասնակցելով անոնք ծառայողական կարեւոր բա-

ժին կը բերեն մեր եկեղեցիէն ներս:

Պատարագի աւարտին Առաջնորդ Սրբազան Զայրոյ, Յոգեշնորհ Զայր Սուրբը, Քահանայադէրը, նոր ձեռնադրուած սարկաւազները, դպիրներն ու հաւատացեալ ժողովուրդը թափօրով միասին ուղղուեցան դէպի Ազգ. Առաջնորդարան, «Կիլիկիա» մաղթերգի երգեցողութեամբ:

Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն Ներս Առաջնորդ Սրբազան Զայրոյ հիւրընկալեց 13 ձեռնադրուած սարկաւազներն ու հաւատացեալները: Սարկաւազները փունջ մը շարականներ երգեցին արտայայտելով իրենց ուրախութիւնը Եւ պատասխանատուութեան ստանձնումը:

Առաջնորդ Սրբազան Զայրոյ շնորհաւորական խօսք փոխանցելով բարեյաջող ծառայութիւն մաղթեց անոնց, ի խնդիր Յայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ պայծառացման:

Ապա, սարկաւազներուն կողմէ շնորհակալական խօսք արտասանեց Բրշ. Յովսէփ Սրկ. Արսլանեան, յայտնելով, որ տարիներու սպասու-



մէն ետք իրականացած սարկաւազութեան կոչումի տուչութիւնը իսկապէս մեծ ուրախութիւն է Բերիոյ Յայոց Թեմին համար: Ան բոլորին անունով որդիական շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Զօր:

Ներկաները միասնաբար երգե-

ցին Յայաստանի Զանրապետութեան օրհներգը, ապա տեղի ունեցաւ աջահամբոյր:

Առաջնորդ Սրբազան Զօր «Պահպանիչ» աղօթքով հաւատացեալները մեկնեցան գոհունակ սրտով, փառք տալով Ամենակալին:

**Մարինա Պողիկեան**

## ՀԱԼԵՊԻ ՄԱՅՐ ՕԳՆՈՒԹԵԱՆՑ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԱԹՈՒԱՆԻՍՏ ԿԵՐԱՆՈՐՈՂՈՒԹ ԵԿԵՂԵՑՈՅ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԿ

Շաբաթ, 7 Դեկտեմբեր 2019-ին պետական բացումը կատարուեցաւ Հալէպի Թիլէ շրջանին մէջ գտնուող Մայր Օգնութեանց Հայ Կաթողիկէ աթոռանիստ եկեղեցւոյ: Եկեղեցւոյ մուտքը զարդարուած էր սուրիական եւ կաթողիկէ համայնքի դրօշներով եւ շնորհաւորական ծաղկե-

բացումեցաւ: Արհի. Տէր Պետրոս շնորհակալութիւն յայտնեց Նաեւ Հալէպի պետական պատասխանատու մարմիններուն, որոնք դիւրացուցին շնորհարարական աշխատանքները: Հոգեւոր շարք մը երգերով հանդես եկաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ



կողմներով, ինչպէս նաեւ պետական մարմիններու առաքած շնորհաւորագրերով:

Կաթողիկէ Եկեղեցւոյ սկաւտական փողերախումբի կատարմամբ հնչեց Սուրիական Հայրենիքի քայլերգը, ապա վերանորոգման յուշաքարին բացումը կատարուեցաւ:

Բացման հանդիսութեան ներկայ էին Պաաս կուսակցութեան ներկայացուցիչներ, Հանրապետութեան Մուֆթի տոքթ. Ահմատ Պատրոզտտին Հասուն, Ֆրանչիսքօ Պապին ներկայացուցիչը, Սուրիոյ Դեսպան Սրբազան քահանայապետ

ճեմարանի աշակերտական երգչախումբը, գեղ. ղեկավարութեամբ Շատի Լաճճարի:

Թարգմանաբար արաբերէնի ընթերցուեցաւ Ֆրանչիսկոս Պապին Նամակը եւ Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Գրիգոր Պետրոսի երախտիքի խօսքը: Եկեղեցւոյ դպրաց դասուն կողմէ հայերէնով հնչեց Աստուածամօր նուիրուած շարականներ:

Օրը խորհրդաւոր էր ու հոգեպարար: Եկեղեցւոյ սրբատաշ գունեղ քարերը խաղաղութիւն ու նոր կեանք կը խորհրդանշէին:

Արաբական պատկերասփիւռի



Կարտինալ Մարիօ Չենտալի, հայ համայնքապետներ, մահմետական կրօնապետներ, Հալէպի Նահանգապետը, ՀՀ Հալէպի գլխաւոր հիւպատոսը, զինուորականներ, մամուլ ներկայացուցիչներ եւ հրաւիրեալներ:

Բացման խօսքով Բերիոյ Թեմի Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան լուսարձակի տակ առաւ եկեղեցւոյ հնամեայ պատմութիւնը, պատերազմի ընթացքին կրած վնասները եւ վերանորոգման աշխատանքներուն ընթացքը: Ապա համայնքապետը շնորհակալութիւն յայտնեց Սուրիոյ վսեմաշուք Նախագահ տոքթ. Պաշար Հաֆէզ ալ Ասատին՝ իր ներդրումին համար եւ բոլոր կազմակերպութիւններուն ու անհատ բարերարներուն, որոնք նուիրական ներդրումով այս եկեղեցին վերա-

թողակցները հմայուած կը դիտէին եկեղեցւոյ կամարները, սպասները, որոնք առաստաղէն թափանցող արեւի ճառագայթներուն փայլքով ազդեցիկ տեսք մը ստացած էին, քարերը կը խօսէին վերանորոգուող կեանքի մասին:

Հալէպի գլխաւոր Մուֆթի տոքթ. Մահմուտ Աքքամ իր խօսքին մէջ շեշտը դրաւ հաւատքի կարեւորութեան վրայ, վստահեցնելով որ հաւատքի ուժով վերաշինուած են բոլոր սրբավայրերը, ըլլան անոնք եկեղեցիներ կամ մզկիթներ եւ կոչ ուղղեց Սուրիոյ ժողովուրդին Սուրիոյ մէջ թէ դուրս, որ վերադառնան իրենց հայրենիքը եւ աղօթեն իրենց մայր հողին վրայ կառուցուած սրբավայրերուն մէջ, որովհետեւ ժող-

**ժիրայր Կարապետեան**  
Շաբ. Էջ 14 ➤

## ՄԱՅՐ ՕԳՆՈՒԹԵԱՆՑ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԱԹՈՒԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՅ ՎԵՐՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

### «Տէր Սիրեցի Զվայելչութիւն Տան Զո»

Կիրակի, 8 Դեկտեմբեր 2019-ին, յետմիջօրէի ժամը 4:30-ին Հալէպի Թիլէ շրջանին մէջ գտնուող 179-ամեայ հայ կաթողիկէ Մայր Օգնութեանց աթոռանիստ եկեղեցւոյ դռնը բացուեցաւ: Թափօրը ընթացք առաւ եկեղեցւոյ շրջափակէն, դնաքացքի յատուկ արարողութեան, ապա ուղղուեցաւ դէպի խորան, Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի գլխաւորութեամբ:

խորհաններու վերօծումը: Ուշագրաւ էին եկեղեցւոյ մէջ գտնուող չորս սիւները, որոնք նուիրուած էին չորս անտարանիչներուն՝ Ս. Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի, Յովհաննոս: Յաջորդաբար օրհնուեցան եւ միւրոնով օծուեցան ինչպէս նաեւ վերասրբուեցան եկեղեցւոյ մկրտարանը եւ աջ կողմը կառուցուած (1840) Սիրտ Յիսուսի խորանը, որ 1925-ին բարենորոգուած է իտալական մարմարներով եւ Ֆրանսայէն բերուած Ս. Սիրտ Յիսուսի գեղեցիկ արձանը, որուն ներքեւ կը գտնուի Հալէպի



Արարողութեան ներկայ էին Բերիոյ Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպ. Զօպուեան, Հայ Աւետարանական Համայնքի Պետ Վերապատուելի Յարութիւն Սէլիմեան, Ֆրանչիսքոս Պապ Սրբազան քահանայապետի Սուրիոյ ներկայացուցիչ Դեսպան Մարիօ Չենտալի, համայնքապետներ, եպիսկոպոսներ, տարբեր քաղաքներէ ժամանած վարդապետներ, քահանայ հայրեր, արաքիւնագարոց քոյրեր, Հալէպի երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներ, գաղութի մարզական, կրթական, եկեղեցական, մշակութային, բարեփրական հաստատութիւններու եւ

վախճանեալ առաջնորդներուն դամբարանը:

Արհի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեան իր խօսքին մէջ ըսաւ. «Բարեխնամ Աստուած ինքն էր որ օրհնեց եւ ուղղեց մեր քայլը դէպի վերանորոգումի աշխատանք: Յիշողութեանս մէջ թարմ է 5, Նոյեմբեր 2018 թուականը, երբ Նախածեռնեցիք վերաշինութեան աշխատանքի մեկնարկը, աղօթք բարձրացուցիք եկեղեցւոյ փլատակ դասուն մէջ եւ այսօր արդէն, Աստուծոյ հրամանով, աւարտին հասաւ ու վերաբացուեցաւ եկեղեցին»:

Աւարտին գերապայծառը իր խորին շնորհակալութիւնը յատնեց



միութիւններու ներկայացուցիչներ, հրաւիրեալ հիւրեր եւ հաւատացեալ ժողովուրդը: Եկեղեցւոյ մէջ արարողութիւնը սկսաւ խորանի խաչերու, մոմակալներու, խնկամաններու եւ պատարագի ընթացքին գործածուող բոլոր սպասներու օրհնութեամբ, ընթացքին ընթերցուեցան անտարանէն հատուածներ, հայերէն եւ արաբերէն, ներկայ կրօնաւորներուն կողմէ: Ապա գերապայծառ տէրը վերօծման արարողութիւնը սկսաւ եկեղեցւոյ մայր Աստուածամօր խորհանէն, որուն յաջորդեց ճախակողմեան (Ս. Յովսէփ) եւ աջակողմեան (Ս. Գրիգոր Լուսաւորիչ)

այն հաստատութիւններուն եւ անհատ բարերարներուն, որոնք քաջալերեցին եւ նեցուկ կանգնեցան կատարելագործելու վերաշինութեան ծրագիրը: Արհի. Տէրը մեծապէս շնորհակալութիւն յայտնեց Սուրիոյ վսեմաշուք Նախագահ տոքթ. Պաշար ալ Ասատին՝ իր ներդրումին համար, ինչպէս նաեւ ACN եւ MISSIO ընկերակցութեան, Գերմանիոյ Գոլմի եւ Իտալիոյ Պոլոնիա քաղաքներու թեմերուն, Հռոմի քահանայապետական Լեւոնեան ճեմարանին, Ս. Վլասի հայկական եկեղեցիին, Հռոմի **ժիրայր Կարապետեան**  
Շաբ. Էջ 12 ➤



## ՀԵՏԵԵԼՈՎ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՈՏԱՐՅԵՏՔԵՐՈՒՆ (ծննդեան 135-ամեակին առիթով)

2.



Լեւոն Գառոյեան

Վարուժան, ի վերջոյ, որոշեց հեռանալ գաւառէն ու հաստատուիլ Պոլիս:

Եւրոպիայէն՝ Թեոֆիլի ուղղեալ սամակի մը մէջ ան կը գրէր որ «**յիրաւի, հայրենախտէն վերջ, մարդ կրնայ եղեր վոսփորախտ ալ ունենալ՝ Եղիային պէս**» (կ'ակնարկէ տարաբախտ բանաստեղծ Եղիա Տեմիրճիպաշեանին):

Եւ ուրեմն, 1912-ի ամբաստանութեան ընտանեաց փոխադրուեցաւ Թուրքիոյ մայրաքաղաքը եւ տնօրէն նշանակուեցաւ տեղւոյն Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ ուսումնարանին (Բերա), ի հեճուկս համայնքին եկեղեցական իշխանութեանց, որոնք բուն կերպով կը հակառակէին իրեն (Ներառեալ՝ Պօղոս-Պետրոս ԺԳ. Թերգեան կաթողիկոս-պատրիարքը): Հետեւաբար, խաղաղ չանցան Պոլսոյ իր պաշտօնավարութեան տարիներն ալ: «**Կաթողիկէ Արձագանգ**» պաշտօնաթերթին մէջ մերթ քան մերթ սկսեցին երեւցան իր դէմ. Նոյնիսկ գրուեցաւ, թէ իր պակասարժեքն օրինուր էր «**Էջմիածնական**» ձեւով...:



Ճիրվանգաղէ

Կը թուի թէ պայքարը կ'առնչուէր Հայ Կաթողիկէ **համայնքին հայկական** ինքնութեան պահպանման հարցին, որուն ջատագովներէն էր Վարուժան: Պոլսոյ «**Ազատամարտ**» օրաթերթի լրատուական սիւնակին մէջ (12 Մարտ 1913)՝ իր մէկ ճառագոստութենէն մէջբերուած այն նշումը, թէ «**կղերը ուզեց լատինականութիւն պատուաստել մեզի, բայց մենք հայ ենք ու հայ պիտի մնանք**», ինքնին պերճաբար է արդէն:

Այս նիւթին շուրջ որոշ յստակացումներ կը բերէ Նաեւ Վարուժանի մտերիմը՝ բանասէր Յ. Ծ. Սիրունի, Պոսթընի «**Հայրենիք**» ամսագրին մէջ գրելով:

**-1912-ի ամառը Դանիէլ Պոլիս եկաւ: Կաթողիկ հայերու ազգային գործերը անցեր էին ազատական հոսանքին ձեռքը, եւ ճիգ մը կար հայ շունչը տարածելու Հայ Կաթողիկ համայնքին մէջ: Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի Պոլիս գտնուող նախկին սաները միակ կենսունակ հայ կորիզը կը կազմէին այդ համայնքին մէջ, ու իրենց գլխաւոր մտահոգութիւնն էր հայ ոգին բերել՝ լեզուով ու սրտով ուժանալու գացող համայնքի մը գաւակներուն:**

**Անոնց կազմած Միութիւնն էր, որ ազատական հոսանքը վարեց, պարտութեան մատնեց կղերական ու կղերամիտ տարրը, ձեռք անցուց Պատրիարքարանն ու Լուսաւորչեան ուսումնարանը:**

**Վարուժանը այդ ուսումնարանին տնօրէն կարգեցին: Կղերականները դիրաւ չմարսեցին այս հարուածը, ու երկար ատեն չհանդուրժեցին, որ նոր կենք ու լոյս մտնէ այդ կրթական յարկէն ներս: Ու երկար ատեն շարունակուեցան փսփուքները, գաղտասուքները Վարուժանի անուան շուրջ: ...Ատեն եղաւ Նոյնիսկ, որ իր անունը ոստիկանութեան հաղորդուեցաւ՝ իբրեւ խռովարարի... («Հայրենիք», Նոյեմբեր 1923):**

Ամէն պարագայի, Վարուժան տնօրէնի պաշտօնին վրայ մնաց մինչեւ իր ձերբակալութիւնը՝ 1915-ի Ապրիլի գիշերը...:

Հո՛ւս, Պոլսոյ մէջ, Վարուժան ունեցաւ գրական-հանրային ուշագրաւ գործունեութիւն: Բեմ բարձրացաւ Ալիշանի ու Մ. Պէշիկշաշլեանի Նուիրուած հանդիսութիւններուն, բանախօսեց Րաֆֆիի մահուան 25-ամեակի ու Մկրտիչ Փորթուզալեանի ձեռնարկներուն, իր հրապարակային խօսքերով՝ Մեծարեց Սիամանթօն ու գրաբարագետ Յակոբ Գուրգենը, ճառախօսեց Գիրբորու Գիւտի 1500-ամեակի յորեւելանին: Իրեն վիճակուեցաւ Սիմոն Չաւարեանի դագաղին վրայ դամբանախօսելու պատիւն ալ (Հոկտեմբեր 1913): Հո՛ւս է Նաեւ, որ 1912-ին հրատարակուեցաւ իր երրորդ քերթողագիրքը՝ «**Հեթանոս երգեր**»ը, որ բաւական աղմուկ բարձրացուց գրական շրջանակներէ ներս՝ հին հեթանոսական բարքերը ներկայացնող իր յախումն պատկերներուն եւ արտասովոր համարձակութեան համար:

Բայց բանաստեղծին վրայ ցեխարձակումները սկսեցին արեւելի՛ առաջ...:

«Ո՛ր ԼԱԼԱԳԷ...»Ն ԵՒ «ՊՈՈՆԿԱԳԻՐ» ՎԱՐՈՒԺԱՆ ՄԸ...

Նախ յիշեցնեմ, որ 1908-ի Օսմանեան Սահմանադրութեան յաջորդող տարիներուն, երբ ազգային երազներու ընծիւղման ու ցեղային արժանիքներու վերագարթօնքի շրջան մը կ'ապրուէր ամենուրեք՝ Պոլսէն մինչեւ հայաբնակ գաւառները, մեր արեւմտահայ գրողներէն ոմանք (Ահարոն, Սիրունի, Լ. Եսաճանեան, Եղ. Գոլանճեան, Ռ. Չարդարեան, մասամբ՝ Շանթ, իր «**Հին աստուածներ**»ով եւ այլն) շեշտուած համակրանքով սկսան դիտել հեթանոսական դարաշրջաններու պատմութիւնն ու ըմբռնումները:

Վարուժան ալ անոնցմէ մէկն էր. եւ՝ գլխաւորը:

Այս մտաւորականները կ'աշխատէին հայութեան ցեղային յատկա-

նիշերը փնտռել հեթանոս շատուածներու, արքաներու կամ ասպետներու ռազմական ուժին, Ֆիզիքական առաւելութիւններուն ու փառապանծ յարթանակներուն մէջ: Ուժն ու վայրի գեղեցկութիւնը կը դառնային փառաբանանքի նիւթ, յատկապէս բանաստեղծական կալուածին մէջ: Ասիկա իմացական դարձ մըն էր դէպի Նախաքրիստոնէութիւն, որ մեր ժողովուրդին ազգային բարորութեան ու Մեծ Հայքի աշխարհաքաղաքական հզօրութեան տեսանկիւնէն՝ ցանկալի շատ բան ուներ իր մէջ:

Արդ, 1910-ական թուականներու արեւմտահայ Նորածիլ սկաւառական ու մարմամարգական շարժումը, սարքուած Նաւասարդեան խաղերը, ինչպէս նաեւ հեթանոսական անուն կրող մամուլի կարգ մը անուններ («**Մեհեան**», «**Նաւասարդ**», «**Բագին**») այս շարժումին պտուղներն էին: Ամբողջ շարժումին հիմնական միտք բանին հետեւեալն էր. - **ստրկութեան լուծը թօթափել փորձող արեւմտահայ մարդը կարօ՛տը ունի հին դարերու ուժին ու փառքին:**

Այս շրջանին է ուրեմն, որ տակաւին Սեբաստիա գտնուող Վարուժան սկսաւ գրի առնել իր «**Հեթանոս երգեր**» շարքը, որուն մէջէն միակ բանաստեղծութիւն մը՝ «**Ո՛վ Լալագէ...**»ն, առանձին բաւարար եղաւ փոթորիկ մը ստեղծելու աշխարհիկ ու կրօնական կարգ մը շրջանակներու մէջ:

Ահա՛ւստիկ գրականութեան պատմութեան մէջ ուշագրաւ դրուագ մը, որ սերտօրէն կ'առնչուի արեւմտահայ ու արեւելահայ գոյգ գրականութեանց, հաւասարապէս:

Ի՞նչ պատահած էր:

Թիֆլիսի «**Գեղարուեստ**» հանդէսի Դ. թիւին մէջ (1911), Վարուժան լոյս ընծայեց «**Ո՛վ Լալագէ...**» խորագրով բանաստեղծութիւն մը, որ կը բաղկանար շուրջ իննսուն տողէ: «**Գեղարուեստ**»ը 1908-ին հիմնուած պատկերագրող հանդէս մըն էր ու կը խմբագրուէր Աշուղ Ջիւանիի որդւոյն՝ Գարեգին Լեւոնեանի կողմէ:

Այս բանաստեղծութեան մէջ Վարուժան կը նկարագրէր աշխարհային մայրամուտ մը, երբ ինք, կնոջ հետ թեւանցուկ, կարծեք թէ հռոմէական շրջանի քերթող Ռրատիոսը ըլլար, կը պտտի իր այգիին մէջ: Կուրծի, բերքահաւաքի, մրգահասի եղանակն է: Կինը յղի է, պիտի ծնի ի մօտոյ, ինչպէս աշունը՝ որ իր պտուղները պիտի տայ շուտով: Աշնան բոյրերը գինովցնող են, «**խազմուզին**» (= Նոր գինի) բարկ բուրումը՝ զգլխիչ: Հարիւրաւոր գերիներ կամ խափշիկ գերուհիներ իրենց պարեգօտները մինչեւ պորտ հանգրիճած՝ հնձակին մէջ կը կոխկռտեն ու կը ճվլեն խաղողի ատոք ողկոյցները՝ գինի պատրաստելու համար: Երագային երեկոյ մը, արդարեւ, ուր՝

**Բուրումներն աշունին  
Կը հասնէին մինչեւ աստղերն արծարծուն.  
Ու այգին, լի պտուղներով բազմազան,  
Կարծես կ'այրէր, կը ծաւալէր խունկ մ'անոյշ  
Վա՛րը, մինչեւ Զաղաքին վրայ հեթանոս,  
Զաղաքին վրայ որ միշտ, տօնի խրախի մէջ,  
Կը սպառէր հողն ու աւիշները հողին:**

Բանաստեղծը (կամ ըսենք՝ հեթանոս այգեպանը) պարկէշտ է. ան անկեղծօրէն կը խոստովանի իր կնոջ՝ Լալագէին, թէ ինք այնտեղ, այգիին մէջ, «արիւնի ընդվզումներ» ունեցաւ, ցանկաց իր «**տոնիփով**» (= սեռային բուն կիրք) **ողողել այգիին մէջ քրտնող գերուհիները բոլոր**, թէ պահ մը Նոյնիսկ (կնոջ աչքերէն հեռու, երբ ան կը դառնար անդին՝ Նուռ քաղելու)՝ անգուսպօրէն յանդգնեցաւ համբուրել թուխ եթովպուի գերի մը...:

Ամբո՛րջ «սայթաքումը» ա՛յս է ահաւաստիկ:

Հաւարը կը փրթէր սակայն:

Արեւելահայ նշանաւոր թատերագիր ու վիպագիր **Ճիրվանգաղէ** (Ալեքսանդր Մովսիսեան, 1858-1935) կ'ըլլար առաջին գայթակողը: Ան Թիֆլիսի «**Հորիզոն**» օրաթերթի 8 Յունիս 1912-ի թիւին Ա. Էջին վրայ արհամարհական ոճով կը գրէր.

**-Երէկ իմ բարեկամներից մէկի ցուցմունքով կարդացի մի հայ «բանաստեղծ»ի մի գագրելի ոտանաւորը:**


**Այդ «բանաստեղծ»ի անունն է Դանիէլ Վարուժան, ոտանաւորի վերնագիրը՝ «Ո՛վ Լալագէ...»: Տպուած է այդ կեղտոտ ոտանաւորը «Գեղարուեստ» հանդէսի վերջին համարում:**

**Դատեցէ՛ք ինքներդ: Մեր բանաստեղծը պատմում է, թէ ինչպէս ինքը մի օր իր յղի կնոջ հետ մտնում է մի այգի՝ այգեկուրծի ժամանակ: Այգում աշխատում են եթովպացի կանայք՝ կիսամերկ «ծիծերն ի վար, գոգին մէջ»:**

**Տեսնում է նրանց թէ չէ՝ իսկոյն գրգռում է: Գուն ինքն այսպէս է երգում.**

Ես ունեցայ ընդվզումներ արիւնի:

Ու ցանկացայ արեգակին, հողին պէս



Վ. Վարուժան՝ «Հեթանոս երգեր»

Գիրքերու Աշխարհ -4-

## ՀԱՄԱՍՏԵՐԻ «ԳԻՒՂ» ՀԱՏՈՐԸ



Լարա Արշին

Համաստերի «Գիւղ» պատմութեան հատորը ճշմարտացի ներկայացումն է գիւղական կեանքին եւ գիւղացիին՝ իր առաքինութիւններով, շնորհներով, արժէքներով, նաեւ նեղմիտ մտայնութեամբ:

Համաստեր կը պատկանի յետ-եղեռնեան, սփիւռքահայ գրագետներու փառանքին: Ան իր գրութիւններուն մէջ հետեւողականօրէն գարգացող գիւղական մթնոլորտ մը կը ստեղծէ ու հայրենի գիւղին ամբողջական պատկերը կ'ուրուագծէ:


Ընթերցողը լաւապէս կ'ըմբռնէ գիւղական կեանքին զանազան երեսները՝ բարքերը, մտայնութիւնները եւ մարդկային յարաբերութիւնները: Խարքերոցի արծակագիրը իր տողերուն մէջ Փերչենճ գիւղի բարբառը կ'անմահացնէ: Իր գրիչին շունչով կը վերակենդանացնէ գիւղացիին թաքուն խռովքը:

Թեւ հատորին մէջ մեծ տեղ յատկացուած է տիպարներու նկարագրային յատկութիւններուն, կենցաղային հարցերուն, հոգեբանական վիճակներուն, միեւնոյն ատեն սակայն, ընթերցողի տեսադաշտին դիմաց կը բացուին գեղանկարչական ճաշակով պատկերուած դաշտերը, արօրին աշխատանքը, ջրտուքը, ոսկեայ ցորեաններուն վէտ-վէտ ալիքները, հոս-հոն նետուած կոճղերը, ծանր ու դանդաղ գոմէշները, ծառաստաններու շուքին տակ խժացող հորթերը, ուղտերու կարաւանները, նաշխուն խեցիով կրիաները եւ այլն:

Հեղինակը մեծ կարեւորութիւն կու տայ հերոսներուն հողին ու ջուրին հետ ունեցած հոգեկան կապին: Իր հերոսները խեղճուն կ'արտաքինով, տընաշանօրէն աշխատող ու պարկեշտ տիպարներ են, ինչպէս՝ ամուրի եգերքին քնացած ջրուորը, արտին նուիրուած «Տափան Մար-

գար»ը, Այգեստանը հսկող Կար Ամուն, որբեայրի, աւելը ձեռքին աշխատող Մուշը, խուլ սակայն լուռ գործող «Փիլիկ Աղբար»ը:

«Գիւղը» պատմութեան շարքին մէջ հեղինակը գեղջուկներուն կենցաղը իրապաշտօրէն ներ-



կայացնելով, անոնց կը միաձուլէ իր մանկութեան քաղցր յուշերը՝ «Երևել կ'ըն Օրերուն», «Նապաստակի Մը Օրագիրը», «Հին Օրերուն»: Երագային մթնոլորտ մը կը հիւսէ «Աստղական Սայլը» պատմութեանը: Հայրենի բնաշխարհին գեղեցկութիւնը, հայ ժողովուրդին ազգային նկարագիրը, գիւղացիին տիպոր ճակատագիրը կ'արտադրէ «Միջօ», «Փիլիկ Աղբար» եւ «Վարդան» պատմութեանը մէջ:

Գիւղագիրը անհուն սեր, գորով ու պաշտամունք կը տածէ հայրենի հողին եւ գիւղացիին հանդէպ: Սփիւռքահայ գրականութեան ածուին մէջ հանդէս եկած նոր «Թլկատեցի» մը կը սեպուի Համաստեր, սակայն նոր ու իւրայատուկ ոճով, պատմողական առիւնը ձեւերով:

## ՀԱՅ ԱՄՏ. ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՑՈՒՑԱՀԱՆՂԵՍԻ ԲԱՅՈՒՄ

Դեկտեմբեր ամիսը ուրախութեան եւ բերկրանքի ամիս է: Տօնածառը, անոր գունագեղ զարդարանքները եւ ամանորեան ճոխ ձեռնարկներն ու հաւաքոյթները տարբեր աշխուժութիւն եւ եռանդ կու տան հասարակութեան:

Հայ Աւետարանական Բեթէլ Եկեղեցւոյ Տիկնանց Վարչութիւնը աւանդութեան համաձայն կազմակերպեց տարեկան Ամանորեայ Ցուցահանդէսը, որ ճոխ եւ բազմատեսակ զարդարանքներ կ'ընդգրկէր: Այնտեղ անգամ մը եւս, գեղեցիկ յարդարումով ներկայացուած էին արուեստագետ եւ ստեղծագործ հայուհիներու ձեռագործ աշխատանքներ, հայկական աւանդական ձեռագործներ եւ համադրում ունեւտներ:

Նման ցուցահանդէսները, որոնց ընթացքին հնարամիտ եւ ստեղծա-



գործ մեր օրիորդները եւ տիկիները գործի կը վերածեն իրենց բազում շնորհները եւ գեղեցիկ զարդերով մեզ բոլորս կը նախապատրաստեն Նոր Տարուան:

Եզրափակելով վերապատուելին ըսաւ. «Կեանքը Աստուծա՛յն մեզի



Ցուցահանդէսին բացումը կատարեց Վերապատուելի Համայնքապետ Յարութիւն Սելիմեան: Թալին Արապալուեան Հայ Ամետ. Բեթէլ Եկեղեցւոյ Տիկնանց Վարչութեան

տրուած պարգէն է, զայն իմաստաւորեմք բարի արարքներով»:

Ապա ան այցելեց տաղաւարները՝ մերթ դիտելով, գրուցելով եւ մերթ նպատակայարմար միտքեր



անունով բարի գալուստ մաղթեց ներկաներուն: Վերապատուելի համայնքապետը այնուհետեւ բարձր գնահատեց մասնակիցները ու ըսաւ. «Ճգնաժամային այս օրերուն, բարձր գնահատանքի արժանի են

արտայայտելով ու գնահատելով մասնակիցները:

Ցուցահանդէսը մեծ ընդունելութիւն գտաւ ու տօնական մթնոլորտ ստեղծեց:

Հոլիսա

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Գապագեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝


### ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

### ՅԱԿՈՐ ԳԱՊԱԳԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեայի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2019-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Կիլլաներ -Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:



### ԲԺՇԿԱԿԱՆ

### ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ՎԱՃԱՌԸ

Տիկ. Անահիտ Զասսիս իր ամուսնոյն եւ նահատակ որդւոյն նախաձեռնած բժշկական արդիական կօշիկներու վաճառքը կը շարունակէ:

Հասցէ՝ Հալէպ-Սուլէյմանիէ-Զալլաս թաղ:

Հեռաձայն՝ 2227517 - 4614258 - 0944 960063

# ՀՅԴ 129-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՈՒՂՈՎԱԾ ՇՆՈՐՀԱԽՈՐԱԳՐԵՐ



Սրտի անհուն ուրախութեամբ կը շնորհաւորենք եւ կ'ողջունենք ՀՅԴ-ի մեծ ընտանիքը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 129-րդ ամեակին առիթով:

Հիմնադրութեան օրէն սկսեալ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը գործի կուսակցութիւն հանդիսացաւ, պաշտպանելով հայ ժողովուրդի գերագոյն շահերը եւ հետապնդելով Հայ Դատի արդար լուծման աշխատանքները:

Փառք ու պատիւ ՀՅԴ-ի շարքերէն ներս ծառայող բոլոր նուիրեալներուն:

Աննահանջ երթ դէպի նոր լուսաւոր ամեակներ:

**Համազգայինի «Բարսէղ Կանաչեան»  
Երաժշտանոցի Վարչութիւն**

\*\*\*

Ազգային Մշակութային Միութիւնը ջերմապէս կը շնորհաւորէ հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ բախտորոշ դերակատարութիւն ստանձնած, եւ անոր ազատութեան ու բարօրութեան խնդիր մարտնչած Հայ Յեղափոխութեան Դաշնակցութեան հիմնադրութեան 129-ամեակը:

Այս բարեբաստիկ առթիւ, մեր մաղթանքն է որ ՀՅ Դաշնակցութիւնը կը շարունակէ իր երթը հիմնադիրներուն պայծառ տեսիլքով եւ սեփական ժողովուրդին ծառայելու անսակարկ նուիրումով:

Հոգեպարար այս հանդիսութեան ընդմէջէն, կը շնորհաւորենք ՀՅԴ-ի Վարչութիւնը եւ ՀՅԴ ողջ ընտանիքը:

Վարձքերնիդ կատար:

**Ազգային Մշակութային Միութեան**

\*\*\*

Հայ ժողովուրդի ազատագրական պայքարի ընթացքին եւ յաղթական երթին մէջ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ունեցաւ ինքնուրոյն ազդեցութիւնը եւ ներգործող ուժականութիւն:

Ան սերունդներու հոգւոյն մէջ դրոշմեց վեհ գաղափարներ, որոնց շնորհիւ հայը մնաց ու պիտի մնայ հաստատակամ, ազատատենչ եւ ստեղծագործ:

Ի սրտէ կը շնորհաւորենք ՀՅԴ-ը այս պանծալի տօնանշումին առիթով մաղթելով յարաճուն վերելք:

**Հայ Ծերանոցի Խնամակալութիւն**

\*\*\*

Գերմանիկ Վասպուրական Մշակութային Միութեան Գործադիր Մարմինը ջերմապէս կը շնորհաւորէ ձեզ Դաշնակցութեան 129-ամեակի առթիւ, բարձր գնահատելով ձեր ժողովրդանուէր ծառայութիւնը եւ սուրբ առաքելութիւնը՝ հայաշունչ դաստիարակութեամբ ազգանուէր սերունդներ պատրաստելու ուղիով:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ամեակներ շարունակ սատար կանգնեցաւ հայապահպանման եւ ազգային ոգի ներշնչելով դարձաւ բոլորանուէր ծառայելու անզուգական օրինակ:

Անվերապահ հիացումով կ'արտայայտենք եւ կը փոխանցենք մեր շնորհաւորանքները եւ կը մաղթենք որ հաստատ քայլերով եւ աննկուն կամքով շարունակէք ձեր երթը միշտ պատնէշի վրայ մնալով եւ հաւատարմօրէն ծառայելով ձեր մշտանորոգ ուխտին:

**Գերմանիկ Վասպուրական Մշակութային Միութեան  
Գործադիր Մարմին**

\*\*\*

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան իւրաքանչիւր տարեդարձը անպայմանօրէն յիշել կու տայ թէ ինչպէս սուրը, բահն ու գրիչը կեանք առին դաշնակցականներով ու մարմնացան մարտական, քաղաքական, քարոզչական ու դաստիարակչական աշխատանքները:

Դաշնակցականը եղաւ «Մահ կամ Ազատութիւն» գաղափարախօսութեան տիպար օրինակը, կերտեց առաջին հանրապետութիւնը, գէնքով խլեց արդարութիւնն ու իրաւունքները եւ կեանքով երդուեց հաւատարիմ մնալ իր ազգին ու հայրենիքի:

Դաշնակցութիւնը այսօր՝ 129 տարիներ ետք, անվի հզօր ու հաստատուն քայլերով կը շարունակէ դէպի վեհ նպատակ, դէպի Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստան:

Վարձքերնիդ կատար, նուիրեալ ընկերներ եւ բարի երթ դէպի նոր գեղուն ամեակներ:

**ՀՄԸՄ-ի Հայկայ Մասնաճիւղի Վարչութիւն**

\*\*\*

Քրիստափորի, Ռոստոմի եւ Չաւարեանի կերտած Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր հիմնուած օրէն նպատակ ունեցաւ պահպանել հայ մարդու ինքնութիւնը, հողը եւ ազգային արժէքները, դէմ դնելով կեանքի բոլոր մարտահրաւերներուն: Այսպիսով ՀՅԴ-ն դարձաւ Հայ ազատագրական շարժման ռահվիրան եւ Հայ Դատի հաւատարիմ ուխտաւորը:

Այսօր 129-ամեայ Հայ Յեղափոխութեան Դաշնակցութիւնը իր «ժողովրդողանուէր ծառայութեամբ եւ մշտանորոգ ուխտով» կու գայ շեշտելու, որ այս հզօր կուսակցութիւնը անխափան քայլերով պիտի շարունակէ իր երթը մինչեւ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի կերտումը:

Այս առթիւ կը շնորհաւորենք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 129-րդ տարեդարձը մաղթելով յարատեւ նուաճումներ եւ լուսաշող վերելք: Բարի երթ դէպի նորանոր ամեակներ:

**ՀՄԸՄ-ի Հայկայ Մասնաճիւղի  
Սկաւուտ Խորհուրդ**

\*\*\*

ՀՄԸՄ-ի Սուրիոյ Ծրջանային Վարչութիւնը սրտի անհուն բերկրանքով կ'ողջունէ եւ կը շնորհաւորէ ողջ հայութիւնը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 129-րդ ամեակի տօնակատարութեան առիթով:

«Ժողովրդանուէր Ծառայութիւն, Մշտանորոգ Ուխտով» կարգախօսը նոր թափ ու եռանդ կը ներշնչէ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերէն ներս բոլոր ծառայողներուն:

Հայկական արժէքներու պահպանումին եւ Հայ Դատի հետապնդումին նախանձախնդիր Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կառնած կը մնայ իր դաւանած գաղափարախօսութեան եւ սրբազան առաքելութեան, ի խնդիր հայ ժողովուրդի գերագոյն շահերուն:

Բիւրյարգանք ՀՅԴ-ի շարքերէն ներս իրենց անսակարկ ծառայութիւնը մատուցող բոլոր նուիրեալներուն:

Շնորհաւոր 129-ամեակ, դէպի փառապանծ ամեակներ:

**ՀՄԸՄ-ի Կեդր. Վարչութիւն  
ՀՄԸՄ-ի Սուրիոյ Ծրջ. Վարչութիւն  
Եւ Ծրջ. Սկաւուտ Խորհուրդ**

\*\*\*

129 տարիներ առաջ Սուրը, Բահը, Գրիչը, կեանք առին դաշնակցական երիտասարդ ղեկավարութեամբ ու մարմնացան ռազմական, քաղաքական, դիւանագիտական, քարոզչական ու դաստիարակչական աշխատանքներուն ու գործերուն մէջ, ընդմիշտ պատուով կրելով «Հայկական Աւանդական Կուսակցութիւն» տիտղոսը:

Ծնունդ առնելով Հայ ժողովուրդի ծոցէն, հաւատքի եւ գործ համատեղումը եղաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան սուրբ պարտականութիւնը որը հաւատարիմ իր սեփական ուժերուն ու ծառայելով Հայաստանի եւ Հայութեան ազատագրութեան դատին, ապահովեց ազատ ու անկախ Հայաստանը:

Ի սրտէ կը շնորհաւորենք ՀՅԴ հզօր կազմակերպութեան 129-ամեակը, մաղթելով որ հաստատակամութեամբ եւ յարատեւ յանձնառութեամբ շարունակէ ճաճանչել որպէս փարոս, ստուերոտ հայ ժողովուրդի ճանապարհին վրայ դէպի յաւելեալ երկարատեւ ամեակներ եւ նորանոր ձեռքբերումներ՝ ի շահ հայ ազգի հզօրացման:

Շնորհաւոր տօնը, շնորհաւոր ծնունդը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն:

**Հոգաբարձութիւն՝  
Ազգ. Միացեալ Վարժանի**

\*\*\*

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ծրջանային Վարչութեան անունով ընդունեցեք մեր խորին շնորհաւորութիւնները ՀՅԴ-ի հիմնադրման 129-ամեակի առթիւ:

Յոյսով ենք որ եկող տարիներուն ալ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը տալով հայ ժողովուրդին լաւագոյնը կը շարունակէ ազգապահպան սրբազան գործը:

Կը մաղթենք ձեզի յաջողութիւն, համագործակցութեան լաւագոյն մաղթանքներով:

**Ռամկավար Ազատական Կուսակցութեան  
Ծրջանային Վարչութիւն**

## ՄՏԱՄԱՐԶԱՆՔ

ԽԱԶԲԱՌ (ՄՆ 324)



	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1								■				
2							■					
3		■				■			■		■	
4				■					■			■
5				■			■			■		
6	■			■						■	■	
7						■			■			
8		■		■			■					
9			■		■					■		■
10		■					■		■			
11						■		■				
12												■

### Հորիզոնական

- 1- Օտարանալ, այլասերիլ: Պայքար:
- 2- Յագենալ: Տիրան Չրաքեանի ծածկանունը:
- 3- Հակառակ՝ դժուարութեամբ քալող: Չորեքշաբթի:
- 4- Խառնատառ՝ շարք: Այծեամ, եղևիկ:
- 5- Հակառակ՝ դաշտ: Հակառակ՝ ժամանում: Հակառակ՝ խօսք:
- 6- Հակառակ՝ տառի մը անունը: Կիլիկիոյ քաղաքներէն:
- 7- Կաւէ ամաններ շինող: Ձայնանիշ: 2019-ին 100-ամեակ բոլորող միութիւն:
- 8- Հակառակ՝ հարցական դերանուն: Բեռ կրող անասուն:
- 9- Հակառակ՝ շաղկապ: Յոգնակերտ մասնիկ:
- 10- Յանդիմանութիւն: Հող վերցնելու երկրագործական գործիք:
- 11- Յատուկ, բացառիկ: Իգական անուն:
- 12- Շուշիի Սուրբ Ամենափրկիչ մայր եկեղեցւոյ անունը:

### Ուղղահայեաց

- 1- Տարածութեան շրջան: Թանկագին շինչ ապակի:
- 2- Հակառակ՝ երկինջիւն: Թատերական ներկայացումի բաժանում: Տառի մը անունը:
- 3- «Կեչառիս» վանքի վայրը: Հայկական ժողովրդական նուագարան:
- 4- Մետաղեայ ամաններու ծեփ: Հակառակ՝ թաքուն պայթուցիկ:
- 5- Հակառակ՝ գոյութիւն ունին: Հակառակ՝ առու: Դատարկ:
- 6- Եւս: Վարիչ: Արաբական նուագարան:
- 7- Տառի մը անունը: Եւս: Հակառակ՝ տառի մը անունը:
- 8- Արցախի գետերէն:
- 9- Տառի մը հարեւանները: Կրկնուած բաղաձայններ: Տառի մը հարեւանները:
- 10- Ժողով, նիստ: Յուցական դերանուն: Հուր, կրակ:
- 11- Կրկնուած բաղաձայններ: Ֆիլմաշխարհի համաշխարհային մրցանակ:
- 12- Թշուառ, ողորմելի: Խոշոր կապոց:

### ՄԱՅՐ ՕԳՆՈՒԹԱՆՑ...

Սկիզբ՝ էջ 8

մի առաքելական փոխանորդութեան, SOS CHRETINTS, D'ORIENT եւ L'OEUVRE D'ORIENT ընկերակցութիւններուն, Վատիկանի Արեւելեան եկեղեցիներու ժողովին եւ SANT EGIDIO ընկերակցութեան:

Հոռմի Սրբազան Բահանայապետին ներկայացուցիչ դեսպան Կարտինալ Մարիո Չենալի իր գոհունակութիւնը եւ ուրախութեան խօսքը արտասանեց խալէրէն լեզուով, արաբերէնի թարգմանութեամբ հայր Իպրահիմ Սապաղի: Հայր Ներսէ Չապարա արաբերէնով ընթերցեց Ֆրանչիսքոս Պապին

ուղարկած նամակը: Ֆրանսայի թեմի նախկին առաջնորդ Արիի. Տ. Յովհաննէս Եպս. Թերուզեան ընթերցեց Տանն Կիլիկիոյ Գրիգոր Պետրոս. Ի. Կաթողիկոսին նամակը, որ կամքէ անկախ պատճառներով ներկայ չէր:

Արիի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան խորհրդաւոր յուշանուէրներ յանձնեց բոլոր համայնքներու ներկայացուցիչներուն եւ շնորհակալութիւն յատնեց բոլոր անոնց, որոնք ընդառաջեցին հրաւերին եւ մասնակից դարձան ուրախութեան:

Արարողութիւնը փակուեցաւ Տերունական աղօթքով: Արիի. Տերը այնուհետեւ առաջնորդարանի դահլիճին մէջ շնորհաւորութիւններ ընդունեց:

### Պատրաստեց Մարինա Զիւլքրոշեան-Պողիկեան ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 323)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

	7			8				
		4		1	9		5	7
						3	4	
		3				7		6
	5	2		6				
8		7	2	4		9		
	3					1		4
1	4		7	3		2		
				2			3	8

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 94)

Համօ Սահեանի բանաստեղծութիւնները նշանակելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 10 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Սահեանի բանաստեղծութիւններէն մէկը (երկու բառ):

ն	ա	խ	ա	ն	ձ	ա	ս	մ	բ
ե	ա	ա	մ	է	ն	ի	ռ	թ	ն
լ	թ	ն	ա	հ	լ	ջ	օ	ն	ռ
ա	ե	է	ռ	ա	ա	օ	ր	ե	ւ
ս	ռ	զ	տ	ւ	ն	յ	բ	ց	թ
ա	կ	ա	ռ	ա	ն	ձ	ռ	ը	ի
բ	ա	ի	ւ	ւ	մ	դ	բ	ց	ւ
ե	ն	ե	մ	օ	ն	պ	ս	ե	ն
բ	չ	է	ս	ի	տ	բ	ը	ս	ւ
ա	բ	ա	զ	ի	լ	ն	ե	բ	ը

«Օրը Մթնեց», «Բնութիւն», «Նախանձ», «Արագիւները», «Անունդ Տալիս», «Անձրեւ», «Կանչ», «Հայոց Լեզու», «Ամեն Առաւօտ», «Սարեր», «Ամպը», «Եթէ Ես Մի Օր»

### ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱԶԲԱՌ (ՄՆ 323)

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 322)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	թ	ի	կ	ն	է	դ		ա	ռ	թ	ե	լ
2	ի		ն	է		ա		բ	ռ		լ	ա
3	ֆ	ա	բ	հ	ա	տ		ա	ս	բ		չ
4	լ		ն		յ			տ	բ		ա	
5	ի	վ	ա	բ	բ			ռ	ի		կ	
6	ս	կ	ի	ի		թ		ի	մ	ս	լ	
7					օ	թ			տ	ա	դ	
8	զ	ա	ւ	ա	բ	է	ա	ն	ա	ւ	բ	
9	ի	բ	ա	ն		լ	ի	բ	ա	փ		օ
10	լ				ա			զ	ն	բ	չ	
11		վ	բ	է	ժ	ի	ն	դ	ի	բ		ա
12	զ	է	տ	ա	չ	է	ն			ի	կ	

6	8	5	3	1	2	4	7	9
1	3	4	5	7	9	8	6	2
7	2	9	6	8	4	3	1	5
8	9	3	2	4	7	1	5	6
2	1	6	9	5	8	7	3	4
5	4	7	1	3	6	9	2	8
4	5	8	7	2	3	6	9	1
9	7	1	8	6	5	2	4	3
3	6	2	4	9	1	5	8	7

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 93)

Պահուած բառը՝ «Նորօրեայ Աղօթք»

## ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

**ԽՈՅ**  
Տօնական գնումներու պարագային, չափազանցութեամբ հեռու կեցեք, ուրեմն հաւասարակշռուած ձեռով պէտք է ծախսեք:
- 

**ՅՈՒԼ**  
Հաճելի ժամեր կ'ապրիք, ճիշդ ատենն է հմայելու ձեր շուրջինները՝ ձեր գուարթ վերաբերումով: Ծաբաթը ունի այլազան նորութիւններ:
- 

**ԵՐԿՈՒՐԵԱԿ**  
Հանգստանալու մասին մտածեցեք, որովհետեւ այս օրերուս տարբեր գործեր կատարած էք. պէտք ունիք հանգիստի:
- 

**ԽԵՅՁԵՏԻՆ**  
Պէտք ունիք ձեր բարեկամներուն: Փոխադարձեցեք անոնց այցելութիւնը: Յարգեցեք ընկերութեան պահանջները:
- 

**ԱՌԻԾ**  
Տարեվերջը կը ստիպէ ձեզի, որ հաշուեկշիռ մը ընէք, նախ օգտուեցեք տօնական օրերէն, ապա գործի անցեք:
- 

**ԿՈՅՍ**  
Օգնեցեք աղքատներուն եւ անօգնականներուն՝ ձեր կարողութեան ներած չափով: Մի՛ մոռնաք զրկեալները:
- 

**ԿԵՒՈՔ**  
Նոր պատասխանատուութիւններ ձեզ պիտի վերածեն տարբեր անձի մը՝ ուրիշներու հետ բաղդատած: «Բարիք ըրէ, ծովը նետէ», կ'ըսէ առածը:
- 

**ԿԱՐԻՃ**  
Որոշ հարց մը լուծելու ձեր ջանքերը յաջողութիւն պիտի չգտնեն, հետեւաբար փոխեցեք ձեր տեսակետը եւ այլ հարցերու մասին մտածեցեք:
- 

**ԱՐԵՂԱՒՈՐ**  
Ծննդեան գիշերը բարեձէ եւ ներկայանալի ըլլալու համար դասաւորեցեք ձեր ջանքերը, որպէսզի ուրախանաք եւ ուրախացնէք:
- 

**ԱՅԾԵՂԶԻՐ**  
Մարգանքը կարեւոր տուեալ մը պիտի ըլլայ այս օրերուն, որպէսզի պահեք ձեր բարեձէութիւնը եւ առողջութիւնը: Մի՛ ծուլանաք:
- 

**ԶՐՅՈՍ**  
Գէշ տրամադրութիւնը ժխտական ազդեցութիւն պիտի ունենայ ձեր ընտանիքին վրայ: Պաշտպանեցեք ձեր մերձավորները՝ բարեացակամ տրամադրութեամբ:
- 

**ԶՈՒԿ**  
Բնութիւնը ձեզի պիտի շնորհէ անմոռնալի պատեհութիւն մը: Ծաբաթը բացառիկ է ընտանիքին հետ ժամանակ անցընելու:



## ԿԱՂԱՆԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ



Կաղանդի նախօրէին բոլորս կը յարդարենք մեր բնակարաններն ու գործատեղիները կաղանդի յատուկ զարդերով ու տօնածառով՝ հոգեպէս նախապատրաստուելու նոր տարուան եւ դրական մթնոլորտ ստեղծելու:

Ստորեւ կը ներկայացնենք կարգ մը յարդարանքներ, զորս կիրարկելով կարելի է գեղեցկացնել մեր բնակարանները եւ խնայողութեամբ պատրաստուիլ նոր տարուան:

**Ինչպէ՞ս յարդարել սեղաններն ու պատուհանները**  
Ամարիլիս ծաղիկով յարդարանքը շատ գեղեցիկ է: Ամարալիս ծաղիկին հայրենիքը Հարաւային Ամերիկան է, անիկա բաւական չարքաշ եւ դիմացկուն ծաղիկ է: Ամարիլիսին գոյնը կարմիր է, բայց կան նաեւ ճերմակ, վարդագոյն գոյնի ամարիլիսներ:

**Անանասով յարդարանք**  
Առնել միջակ չափի ձեւաւոր անանաս մը, գլխատել եւ միջուկը պարպել եւ հոսող ջրով տակ լաւապէս ցօղուել, ապա ցամբեցնել եւ գետեղել ներկայանալի, բաց ամանի մը կեդրոնը: Ծուրջը տարածել քրեմալըրի պտուղի հատիկները եւ կամ՝ կարմիր, մանր շաքարներ:

Անանասին մէջ ջուր լեցնել եւ մէջը գետեղել վառ կարմիր ծաղիկները:

**Պատուհանի յարդարանք**  
Պատուհանին առջեւ գետեղեցեք արծաթեայ գեղեցիկ փսէ մը, վրան գետեղեցեք զանազան չափի ճերմակ մոմեր՝ Նոր տարուան գիշերը վառելու համար: (Վառած մոմերը վարագոյրէն հեռու պահեցեք արկածներ կանխարգիլելու համար):

Ափսէին կողքին գետեղեցեք թելիսի երկու ծրարիկներ, որոնց մէջ աւազ լեցուցած ու բերանը կապած ըլլաք: Իւրաքանչիւր ծրարիկի կեդրոնը մէկական փոքրիկ տօնածառ հաստատեցեք եւ արհեստական ձիւնով ծածկեցեք:

**Բաղնիքի հայելիի յարդարանք**  
Նոր տարուան շրջանին տան բաղնիքն իսկ պէտք է որ տօնական տեսք ունենայ, մանաւանդ եթէ հիւրեր պիտի ընդունիք:

Այսպէս, կրնաք լուացարանի հայելիէն ժապաւեն մը կախել եւ վրան հաստատել մաղթանք-

ներ, փայլուն աստղեր, զանգակներ... ինչ որ ձեր մտքէն կ'անցնի:

Յանձնարարելի է, որ մնաք չէզոք գոյներու (ճերմակ, արծաթագոյն...) սահմաններուն մէջ եւ շատ չխճողեք բաղնիքը:

**Ներքին դուռի յարդարանք**  
Բացի տան մուտքի դուռէն, կարելի է նաեւ զարդարել ներքին դուռերէն մէկը: Այսպէս, ինչպէս նկարը ցոյց կու տայ, դրան շուրջ հաստատեցեք եղեւիտի արհեստական ճիւղերու պսակ մը, տեղ-տեղ Կաղանդի պուլեր եւ Կաղանդի բացիկներ հաստատելով:

**Նուէրներ ծրարելու յարդարանք**  
Նուէրին չափ կարեւոր է անոր ծրարումը, քանի որ առաջին ակնարկով մը արտաքին տեսքն է, որ կը տպաւորէ մեզ:

Կարելի է ընտրել միագոյն նուէրի թուղթեր, կապել՝ համապատասխան ժապաւենով մը եւ անոր վրայ հաստատել բարեմաղթութեան պիտակ մը, սնոպարի պգտիկ ողկոյզներ, բոժոժներ եւ եղեւիտի պգտիկ ճիւղ մը:

Գիրք նուիրելու պարագային, կրնաք հրաժարիլ նուէրի թուղթէն: Գիրքը կամ գիրքերը փաթեցեք ժապաւենով մը վրան հաստատեցեք Կաղանդի պուլեր եւ դալար ճիւղ մը:

Եթէ ապակեայ շիշի մէջ ձեր մէկ մասնագիտութիւնը (անուշ, ռուպ, թթուաշ...) պիտի նուիրէք, կափարիչին շուրջ ժապաւեն մը կապեցեք, վրան հաստատեցեք պիտակ մը, Կաղանդի պուլ մը, բոժոժ մը եւ կամ եղեւիտի պգտիկ ճիւղ մը:

**Բարձրու յարդարանք**  
Այո, մինչեւ իսկ բարձրը կրնան տօնական հագուստ հագնիլ: Ինչպէս գոյգ նկարները ցոյց կու տան, կարելի է առնել միագոյն բարձի երես մը եւ վրան կարել տարբեր գոյնով տօնածառ մը, կամ՝ տօնածառեր (գծելու եւ կտրելու իմաստով ամենէն դիւրինն է):

**Պնակի եւ անձեռոցիկի յարդարանք**  
Ընտրեցեք երկու, տարբեր չափի պնակներ, մեծը՝ կարմիր, պգտիկը՝ ճերմակ: Թուղթ կամ կտորէ անձեռոցիկին տուէք քառակուսի ձեւ եւ ծալեցեք այնպէս մը, որ մէջը կարենաք գետեղել եղեւիտի դալար ճիւղ մը: Ապա դանակն ու պատառաքաղը գետեղեցեք հորիզոնական ձեւով եւ զուգահեռ, իսկ դալար՝ ուղղահայեաց:

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՀԵՏԵԵԼՈՎ...

Սկիզբ՝ էջ 9

Բեղմնաւորել ինձ մերձեցող ամէն հունտ.

**Այսինքն, հասարակ մահկանացուների լեզուով ասած, հայ «բանաստեղծ»-ը ցանկութիւն է ունենում սեռական յարաբերութիւն ունենալ բոլոր եթովպոսիներին հետ...**

Համբուրեցի՛... բռնած հնդիկ ծամերէն

Պանկեցուցի ժպտագին գլուխը կործքիս,

Եւ հեշտաբո՛ւռն շրթներով, Լալա՛գէ,

Համբուրեցի՛...:

**Դա արդէն պոռնկագրութիւն չէ, այլ կատարեալ պոռնկութիւն: Եւ ահա Դանիէլ Վարուժանի պէս երեսօմանները մեզ իրանց պոռնկութեան նմուշները ծախում են բանաստեղծութեան տեղ...:**

**Տեսարանի այլանդակութիւնը երեւակայելու համար անելորդ չեմ համարում ասել, որ եթովպոսիները յայտնի են իրանց տգեղութեամբ: ...Ուրեմն հայ «բանաստեղծ»-ի ճաշակը այնքան այլանդակ է, որ նոյնիսկ ֆիզիքական այլանդակութիւններից էլ չի խորշում...:**

**Ո՛հ, մարդու փսխանքն է գալիս այս տեսակ գռեհիկ, կոպիտ, ամօթից ու ամենատարրական ճաշակից գուրկ «բանաստեղծներ»-ի գործերը կարողալիս:**

«Նամուս»-ի ու «Պատուի Համար»-ի հեղինակը ամենէն վերջն ալ խորատ կու տար **«Գեղարուեստ»**-ի խմբագիր Գ. Լեւոնեանին ու կը գրէր.

**-Կը ցանկայի, որ այր. Գ. Լեւոնեանը չենթարկուէր մի խումբ տգետ, անճաշակ, արեւելեան կեղտը իղեալական սիրոյ եւ գորտերի կրկնոցը սոխակի դայալիկի տեղ ընդունող ասիացիների խրախուսանքին...:**

Շուտով, Շիրվանգ ադէին կը ձայնակցէին Թիֆլիսի **«Մշակ»** ու Պոլսոյ **«Կարողիկէ Արձագանգ»** ը եւս: Երկուքն ալ կը դատապարտէին Վարուժանը, կը մրոտէին ու կը խժեթէին զինք ծանր որակումներով: Նոյն ժխտական վերաբերմունքը կ'արտայայտէր նաեւ արեւելահայ գրքննադատ Յարութիւն Սուրխաբեան:

(Շարունակելի - 6)

### ԶԱՐՄԻԿ ՊՕՂԻԿԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 4

մարտահրաւերներուն նկատմամբ: Տեսնուածն էր ընկերային քաղաքականութեան մէջ կարեւոր համարելով ընկերային արդարութիւն հաստատող մօտեցում, որ միաժամանակ մրցակցային հաւասար պայմաններ կը ստեղծէ բոլորին համար. եւ ըստայնմ երկրի բարիքները կը հասնին հասարակութեան բոլոր խաւերուն, իսկ նուազ կարելիութիւն ունեցողները կը պաշտպա-

նուին պետութեան կողմէ:

Արցախի հարցին գծով ՀՀ-ը շեշտեց, որ հարցին կարգաւորումը հիմնուած պէտք է ըլլայ Արցախի ժողովուրդին՝ քանի մը անգամ արդէն արտայայտած փափաքին վրայ՝ ապրիլ Ատրպեյճանէն անկախ եւ ի վերջոյ միանալ Հայաստանի Հանրապետութեան:

ՀՀ-ը ունի կարեւոր դերակատարութիւն Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան եւ անոր ձայնը աշխարհին հասցնելու իմաստով: Հարցի կարգաւորման բանակցութիւններուն մէջ Արցախը պէտք է ունենայ լիիրաւ մասնակցութիւն: ՀՀ-ը բանակցութիւններուն մէջ չի կրնար փոխարինել Արցախի Հանրապետութիւնը, այս բոլորը անհրաժեշտ է ամրագրել երկու պետութիւններուն միջեւ ռազմավարական համագործակցութեան պայմանագրով:

ՀՀ ներկայ իշխանութեան վարքագիծը ընդհանուր ամամբ չ'ընթանար այն սկզբունքներու ուղղութեամբ, որ ժողովուրդին մեծ մասը արտայայտած էր 2018-ի ժողովրդային շարժման ընթացքին: Թէեւ դրական որոշ քայլեր առնուած են իշխանութիւններուն կողմէ՝ փտածութեան եւ մենաշնորհներու դէմ, շատ մը պարագաներու սակայն՝ անոնք կատարուած են ընտրովի, ուստի պէտք չէ ժողովուրդը անգամ մը եւս հիպոթափութեան մատնել:

Ցանկալի է միասնական ճիգերով ամրապնդել մեր երկրի ներքին ու արտաքին անվտանգութիւնը, հասարակութեան համերաշխութիւնը, պատմութենէն դասեր քաղելով նայիլ ապագային, որպէսզի հայութեան համընդհանուր ճիգերու մեկտեղումով նոր թափ ստանայ մեր երկրին յառաջընթացը:

Դատապարտելի են մեր ժողովուրդին համերաշխութիւնը վտանգող բոլոր անպատասխանատու դրսեւորումները, հարցերը լուծելու մենիշխանական մօտեցումները:

ՀՅԴ-աշխակցութիւնը, առանց ներքաշուելու ներքին պարակտումներու կործանարար յորձանուտին մէջ, պիտի շարունակէ իր ուղին՝ ուժերու գերազոյն լարումով ծառայելու իր նպատակներուն՝

Հայաստանի Հանրապետութեան բազմակողմանի զարգացման,

Արցախի հարցին բարուը լուծման,

Ձաւախքի մեր ժողովուրդին իրաւունքներուն պաշտպանութեան Սփիւռքի հզօրացման եւ Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստանի կերտումին:

Սիրելիներ,

Պատերազմէն տակաւ դուրս եկող Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջաններ թրքական վերջին ներխուժումը գոյութեան նոր մարտահրաւերներու դիմաց կը դնէ սուրիահայութիւնը: Թուրքիոյ նոր սմանեան այս որժա կնէրը կրկին գլուխ կը ցցեն՝ սուրիահայութեան եւ ընդհանրապէս Սուրիոյ անվտանգութիւնը խախտելով: Սուրիահայութիւնը այս բոլորին մէջ գտած է իր

ապրելու եւ գոյատեւելու բանաձեւը, անհրաժեշտ է, սակայն, ըլլալ զգօն եւ համահայկական ճիգերով, Հայաստան-Սուրիա յարաբերութիւններու ամրապնդումով պահպանել սուրիահայութեան անվտանգութիւնը, նպաստել անոր վերականգնումին ու պատմական դերակատարութեան պահպանման, որպէս Հայոց Ցեղասպանութենէն ճողոպրած մեր ժողովուրդին կարելու մէկ հատուածը, պատմական Հայաստանի ժառանգութիւնը կրող ու ցեղասպանութեան վկան հանդիսացող հայութեան կարեւոր մէկ մասնակց: Յատկապէս նկատի ունենալով, որ Սուրիական Հայրենիքը երկրիս վստմաշուք նախագահին ղեկավարութեամբ ամէն ջանք ի գործ կը դնէ ու պարարտ հող կը ստեղծէ սուրիահայութեան վերականգնումին եւ երկրին աստիճանական ապաքինման համար:

Ուստի, ձեռք- ձեռքի տալով, լծուիք վերակառուցմանու համայնքի վերաշխուժացման յոյժ կարեւոր աշխատանքներուն, կանգուն պահելով մեր կառոյցները, գօրավիզ կանգնելով ու նկատառելի դեր վստահելով երիտասարդ տարրին:

Յարգանք բոլոր այն նահատակներուն, որոնք գոհուեցան Հայաստանի, Սուրիոյ եւ Արցախի հողերուն պաշտպանութեան ի խնդիր:

Կեցցե՛ մեր ժողովուրդը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Կեցցեն Հայաստանը, Արցախն ու Սուրիական Հայրենիքը:

### ՀԱԼԵՊԻ ՍԱՅՐ...

Սկիզբ՝ էջ 8

վուրդն է, որ կը ծառայէ եկեղեցիին եւ մզկիթին, առանց ժողովուրդին անոնք պարզապէս քարաշէն կառոյց մը կը դառնան: Իր խօսքի ակարտիստ ան շնորհաւորեց ժողովուրդին վերադարձը դէպի իր եկեղեցի եւ ըսաւ, որ մենք սրտով ձեզի հետ ենք, կը յուսանք, որ Սուրիոյ բոլոր համայնքներուն զաւակները վերադառնան իրենց տուները:

Հուսկ, երախտագիտութեան իր խօսքը արտասանեց Սուրիոյ Հանրապետութեան Մուֆթի տոքթ. Պատրիարք Ահմատ Հասուն, որ վեր առաւ զոյգ կրօնքներուն մէջ տեղ գտած միմիանց հանդէպ սերն ու յարգանքը ու ըսաւ. «Այս պատմական եկեղեցւոյ բացումը նամակ է յողած ամբողջ աշխարհին, որ մենք կը վերաշինենք այն ինչ որ կը քանդեն, ըլլայ ան եկեղեցի կամ մզկիթ: Ահաբեկիչները քանդեցին, աներեցին մեր սրբավայրերը, սակայն չկրցան քանդել Սուրիան: Մենք կ'ապրինք եղբայրաբար, մէկ հողի վրայ: Յաճախ կ'աղօթեմ եկեղեցիներու մէջ, որովհետեւ տարբերութիւն չեմ դնէր եկեղեցւոյ եւ մզկիթի միջեւ: Մեր աղօթքները կը բարձրացնենք մէկ Աստուծոյ, ինքն է, որ մեր ու խաղաղութիւն կը պարգեւէ մեզի՝ եկեղեցւոյ զանգի դօղանջին եւ մզկիթի կանչին կ'անսանք առանց տարբերութիւն դնելու անոնց միջեւ»:

Աւարտին ան փոխանցեց Սուրիոյ Հանրապետութեան նախագահին ողջոյնը եւ իր խօսքը ակարտեց ներկաները իրաւիբելով մէկ վայրկեան յոտնկայս յարգելու Սուրիոյ բոլոր նահատակներուն յիշատակը:

Աւարտին Արիի. Տեր Պետրոս Արք. Միրիաթեան եկեղեցւոյ քանդուած առաստաղէն առնուած փայտերով պատրաստուած յուշանուէր մը փոխանցեց Սուրիոյ նախագահին: Յուշանուէրը Սուրիան խորհրդանշող կրօնական գծագրուած պատկերն էր: Ապա նոյնանման յուշանուէրներով պարգեւատրեց Հալէպի նահանգապետը, Սուրիոյ Հանրապետութեան մուֆթին, Հալէպի պետական պատասխանատու մարմիններու ներկայացուցիչներն ու Պաաս կուսակցութեան ներկայացուցիչները, որպէս շնորհակալութեան արտայայտութիւն իրենց անվերապահ աջակցութեան համար:

Ապա շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն, որոնք ընդառաջեցին համայնքի հրաւերին:

Հանդիսութեան յաջորդեց ճաշի հրաւերը, որ տեղի ունեցաւ «Սարդարապատ» սրահին մէջ:

**«ԳԱՆՁԱՍԱՐ»**  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

**Խմբագիր՝ Զարմիկ Զիլվերշեյն-Պողիկեան**  
**Սրբագրիչներ՝ Զեփիւռ Պապիկեան-Աւագեան**  
**Յուշիկ Ղազարեան**  
**Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան**  
**Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան**  
**Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան**  
**Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան**  
**Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվերշեյն**  
**Հաշուապահ՝ Սեւակ Կիլվանեսեան**

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:  
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:  
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:  
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:  
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:



Ռաֆֆի Միլատեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

- Սուրիոյ հաւաքականի խաղացող Ումար Խուրեյպի Յիլալ խումբին հետ իր մասնակցութիւնը պիտի բերէ համաշխարհային ակումբներու ֆութպոլի ախոյեանական մրցաշարքին: Պատմութեան մէջ, Ումար սուրիացի առաջին խաղացողն է, որ մաս կը կազմէ սոյն մրցաշարքին:

- Սուրիոյ ֆութպոլի հաւաքականի խմբապետ Ումար Սոմայի վիրաբուժութիւնը Գերմանիոյ մէջ յաջող ընթացած է:



- Կիրակի օր Դամասկոսի մէջ կատարուեցաւ արեւմտեան Ասիոյ աղջկանց Ս16-ի պասքէթ մրցաշարքի բացման արարողութիւնը: Մրցաշարքին մասնակցութիւն պիտի բերեն Սուրիոյ, Լիբանանի եւ Իրաքի հաւաքականները:

Մրցաշարքի աւարտին, Սուրիոյ պասքէթի աղջկանց պատանեկան հաւաքականը հանդիսացաւ Արեւմտեան Ասիոյ ախոյեան: Հաւաքականին մաս կը կազմէր ՅԵԸ-ի խաղացող Արմիկ Պօշկէգէնեան, որ շատ լաւ խաղարկութեամբ հանդէս եկաւ:

## ՀԱՅԿԱԿԱՆ

### ԼԵՆՆ ԱՐՈՆԵԱՆ GRAND CHESS TOUR-ԻՆ ԶՈՐՐՈՐԴ ԴԻՐՔԸ ԳՐԱՄԵՑ

Լոնտոնի մէջ տեղի ունեցած Grand Chess Tour-ի եզրափակիչ փուլին, հայկական ճատրակի առաջնատար Լենն Արոնեանը գրաւեց չորրորդ դիրքը: Երրորդ տեղի համար կատարուած մրցումին հայ կրոսմայստըրը պար-



տուեցաւ աշխարհի ախոյեան, Լորդելիացի Մագնուս Կարլսին դիմաց: Երկու դասական հանդիպումներուն, Լենն Արոնեան առաջինը աւարտեց պարտութեամբ, իսկ երկրորդը հաւասար արդիւնքով: Արագ ճատրակի մրցումին, Արոնեան արձանագրեց մէկ յաղթանակ եւ կրեց մէկ պարտութիւն:

Աւելցնենք, որ Կարլսեն եզրափակիչ փուլին ապահովեց 28 ընդհանուր կէտերէն 17, իսկ Արոնեան՝ 11 կէտ: Grand Chess Tour-ի ախոյեանութիւնը նուաճեց չինացի Դին Լիբենը, պարտութեան մատնելով ֆրանսացի Մաքսիմ Վաշլեն:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏԻ ԵՒ ԱՐՍԵՆԱԼԻ ՓՈՒՆԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ ՎԵՐՍԿԱՆ

Սպանիոյ Ռեալ Մատրիտը ձմեռնային փոխադրաշրջանի ընթացքին փափաք ունի պայմանագիր կնքելու Լոնտոնի Արսենալին եւ Կապոնի ազգային հաւաքականի յարձակող Փիեր-Էմերիկ Օպամեանկի հետ: Սոյն տեղեկութիւնները փոխանցեց The Mirror-ը: Աղբիւրին հաղորդմամբ՝ Ռեալի ղեկավարութիւնը Օպամեանկի տեղափոխութեան փոխարէն կ'առաջարկէ Արսենալին տալ սերպեացի յարձակող Լուքա Թովիչը: Արսենալը պատրաստ է ընդունելու Ռեալի առաջարկը, որովհետեւ լոնտոնեան ակումբին ղեկավարութիւնը չյաջողեցաւ Լորդ պայմանագրի վերաբերեալ համաձայնութեան հասնիլ Օպամեանկին հետ: Յիշենք, որ Լուքա Թովիչ ընթացիկ մրցաշրջանին Ռեալին հետ մասնակցեցաւ 11 մրցումի եւ նշանակեց մէկ կոլ:



### ՄԵՍՍԻ ՍՏԱՅԱՒ 6-ՐԴ «ՈՍԿԻ ԳՆՂԱԿ»Ը, ԻՍԿ ԱԼԻՍԸՆ ԼԱՐԱԳՈՅՆ ԴԱՐՊԱՍԱՊԱՅ ՏԻՏՐՈՍԸ

Պարսելոնայի յարձակող Լիոնել Մեսսի Շաթլէ սրահին մէջ տեղի ունեցած երեկոյին ընթացքին ստացաւ «Ոսկի գնդակ» մրցանակը: France Football ամսագիրը 32-ամեայ արժանիքն անուանեց 2019 թուականի լաւագոյն ֆութպոլիստ: Մեսսի վեցերորդ անգամն է որ կը նուաճէ «Ոսկի գնդակը»:



Սախապէս ան մրցանակ ստացած էր 2009, 2010, 2011, 2012 եւ 2015 թուականներուն: 2019-ին լաւագոյն դարպասապահ ճանչուեցաւ Պրագիլի հաւաքականի եւ անգլիական Լիվըրփուլի դարպասապահ Ալիսըն Պեքըրը: Լեւ Եաշիկի անուան մրցանակը Պեքըրին յանձնեց Ռոպերթ Լեանտովէսկին: Ալիսըն Պեքըր դարձաւ պատմութեան մէջ առաջին դարպասապահը, որ արժանացաւ «Ֆրանս ֆութպոլի» կողմէ սահմանուած «Լեւ Եաշիկի» անուան դարպասապահներու մրցանակին:

### ԱԶԱՐ ՊԻՏԻ ԲԱՑԱԿԱՅԻ ԶԼԱՍԻՔՈՅԻ ՄՐՅՈՒՄԷՆ

Ռեալ Մատրիտի կիսապաշտպան Էտեն Ազար, մեծ հաւանականութեամբ, պիտի բացակայի Սպանիոյ առաջնութեան սպասուած Պարսելոնայի դէմ Զլասիքոյի մրցումէն, որ տեղի պիտի ունենայ 18 Դեկտեմբերին: Սախապէս մայրաքաղաքի ակումբը իր պաշտօնական էջին ճամբով յիշեց, որ պելճիքացի խաղացողը 10 օրով պիտի բացակայի մրցումներէն, բայց մարզիկին դարմանումը դանդաղ ընթացաւ, որուն հետեւանքով ալ հետաձգուեցաւ անոր վերադառնալու թուականը:



ԵՐԱՅՈՒՆԵՐԻ	ԵՐԵՐԵՐԻ	ՉՈՐԵՐԵՐԻ	ՀԻՆԱՐԵՐԻ	ՈՐՐԵՐԻ	ՇՐՐԻ	ԿԻՐԱԿԻ
16/12	17/12	18/12	19/12	20/12	21/12	22/12
5° 14°	3° 14°	3° 13°	4° 14°	4° 14°	2° 14°	2° 12°

## «Ժողովուրդանուի...»

Մկրտչի Էջ 1

դիսացաւ հայ ազատագրական պայքարի տարբեր փուլերուն:

Անդրադառնալով Սուրիոյ տագնապին լուծման առնչութեամբ կազմակերպութեան մօտեցումին, քիլեմեան յայտնեց, որ ԶՅԴ ջատագովն է Սուրիոյ տարածքային ամբողջականութեան, ժողովուրդին միասնութեան եւ հաւասարակշռուած դիրքերէ հանդէս եկող, հայրենասեր բոլոր ուժերու հետ գործակցութեան:



Դատապարտելով Թուրքիոյ հիւսիսարեւելեան շրջան ներխուժումը, ան շեշտեց, որ Սուրիոյ տագնապի քաղաքական լուծումը իր բնականոն հունին մէջ կը մտնէ օտար, ապօրինի բոլոր ուժերուն դուրս մղումով եւ երկիրը սուրիական բանակին մակերպութեան մօտեցումին, քիլեմեան յայտնեց, որ ԶՅԴ ջատագովն է Սուրիոյ տարածքային ամբողջականութեան, ժողովուրդին միասնութեան եւ հաւասարակշռուած դիրքերէ հանդէս եկող, հայրենասեր բոլոր ուժերու հետ գործակցութեան:

Դատապարտելով Թուրքիոյ հիւսիսարեւելեան շրջան ներխուժումը, ան շեշտեց, որ Սուրիոյ տագնապի քաղաքական լուծումը իր բնականոն հունին մէջ կը մտնէ օտար, ապօրինի բոլոր ուժերուն դուրս մղումով եւ երկիրը սուրիական բանակին




վերահսկողութեան տակ պահելով: Այս շնորհակալութիւն յայտնեց երկրիս վստեմաշուք նախագահ տոքթ. Պաշար ալ Ասատին, որ իր յանդուգն կեցուածքներով ու հայրենասիրութեամբ պայքարեցաւ ահաբեկչութեան դէմ ու տիրութիւն ըրաւ երկրին եւ ժողովուրդին:

Հանդիսութեան բանախօս, «Գանձասար» շաբաթաթերթի խմբագիր Չարմիկ Պողիկեան օրուան խորհուրդը ներկայացուց, դիտել տալով որ. « 129 տարուան եռուն կեանք ունեցած, պայքարի տարողունակ խրամատներէ անցած, իր նուիրեալներու արեամբ հայրենիք կերտած, խաղաղասեր, ստեղծագործ ու աշխատունակ իր ժողովուրդին իրաւունքներուն համար աշխարհով մէկ պայքարի դրօշ պարզած կուսակցութեան մը յորելեանի յիշատակումը յարգանքի տուրք մատուցելէն շատ ատելի կը պատգամէ մեր ժողովրդին»: Այս անդրադարձաւ Դաշնակցութեան ուժի աղբիւրներուն ու ըսաւ. « Դաշնակցութեան ուժի հիմնական աղբիւրը իր շարքերուն հաւատքն էր հայ ժողովուրդի տեսիլքին իրականացման հանդէպ: Ուժի երկրորդ աղբիւրը իր գաղափարաբանութիւնն էր՝ ազատութեան, անկախութեան, ժողովրդավարութեան, ընկերվարութեան եւ լեղափոխութեան հիմնասիւներով»:

եան եւ լեղափոխութեան հիմնասիւներով»:

Պողիկեան անդրադարձաւ ԶՅԴ պատմութեան փուլերուն, Սփիւռքի կազմակերպման ու գոյատեւման մէջ ունեցած անոր եական դերակատարութեան ու Հայաստանի անկախացումով, Արցախի ազատագրութեամբ Սփիւռքի ներուժը հայրենիք ուղղելու ջանքերուն, ինչպէս նաեւ Հայ Դատի գրասենեակներուն ճամբով եւ ատելի քան 30 երկիրներու մէջ գործող իր կառուցներով Հայաստանի ու Արցախի շահերուն պաշտպանը հանդիսանալու նպատակին:

Այս բարձրորէն գնահատեց Սուրիոյ տագնապի տարիներուն Հայաստանի քաղաքական ճիշդ դիրքորոշումները տագնապի իւրաքանչիւր փուլին:



չիր փուլին, ինչպէս նաեւ ՀՀ դիւանագիտական գրասենեակներու բաց մնալն ու ՀՀ մարդասիրական առաքելութեան գործունէութիւնը Սուրիոյ մէջ:

Պողիկեան ներկայացնելով ԶՅԴ դիրքորոշումը Հայաստանի անցընցում գարգացման եւ Արցախի հարցին լուծման գծով ըսաւ. « Հայաստանի ԳՄ-ը յառաջացուց ոլորտային մասնագիտական յանձնախումբեր, որոնք միջոցով պարբերաբար իրապարակուեցաւ ու կը իրապարակուի կուսակցութեան կեցուածքը երկրի



գարգացման եւ մարտահրաւերներուն նկատմամբ:

Արցախի հարցին գծով ԶՅԴ-ն շեշտեց, որ հարցին կարգաւորումը հիմնուած պէտք է ըլլայ Արցախի ժողովուրդին՝ քանի մը անգամ արդէն արտայայտած փափաքին վրայ՝ ապրիլ 14-ը պէտք է անկախ եւ ի վերջոյ միասնալ Հայաստանի Հանրապետութեան:

ՀՀ-ը ունի կարելի էր դերակատարութիւն Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան եւ անոր ծայնը աշխարհին հասցնելու իմաստով: Հարցի կարգաւորման բանակցութիւններուն մէջ Արցախը պէտք է ունենայ լիիրաւ մասնակցութիւն: ՀՀ-ը բանակցութիւններուն մէջ չի կրնար փոխարինել Արցախի Հանրապետութիւնը. այս բոլորը անհրաժեշտ է

ամրագրել երկու պետութիւններուն միջեւ ռազմավարական համագործակցութեան պայմանագրով»:



Այս անդրադառնալով Հայաստանի ներքաղաքական ներկայ իրավիճակին ըսաւ.

« ՀՀ ներկայ իշխանութեան վարքագիծը ընդհանուր առմամբ չ'ընթանար այն սկզբունքներուն ուղղութեամբ, գոյս ժողովուրդին մեծ մասը արտայայտած էր 2018-ի ժողովրդային շարժման ընթացքին: Թէեւ դրական որոշ քայլեր առնուած են իշխանութիւններուն կողմէ՝ փտածութեան եւ մենաշնորհներու դէմ, շատ մը պարագաներու սակայն, անոնք կա-


Յետ բանախօսութեան երաժշտական իւրայատուկ կատարումով ելոյթ ունեցան Լիլա Սահակեան (ջութակ) եւ Ռուզան Պարսումեան (դաշնամուր), հանդիսատեսներուն հրամցնելով հայրենասիրական հետեւեալ երգերուն երաժշտութիւնը՝ «Պիտ' Պաշտպանեմ», «Պիտի Գևանք, Վաղ Թէ Ուշ», «Չարթիւր Լաօ», «Հսկայ Երկիր Էր» եւ «Արիւնտ Դրօշ»:

Ձեռնարկի աւարտին Դաշնակցութեան սօսը շնորհաւորեց Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տէր Մասիս Եպս. Զօպուեան: Սրբազան Հայրը ողջունելով ներկաները ըսաւ. «Սովորական կազմակերպութեան մը սովորական հանդիսութեան ներկայ չեք գտնուիր, այլ կազմակերպութեան մը, որ 129 տարիներու հսկայ փորձառութեամբ, աշխատանքով, ներդրումով, նուիրումով եւ գոհողութեամբ օժտուած է: 129 տարիները սովորական չեղան հայոց պատմութեան մէջ: Այս կազմակերպութիւնը ժողովուրդին ծոցէն ծնաւ, բացուեցաւ ժողովուրդին եւ ինքզինք նուիրաբերեց հայրենիքի ազատութեան եւ անկախութեան: Այս բոլորը կ'ենթադրէի գոհողութիւն եւ նուիրում: Դաշնակցութիւնը անհայրենիք մնացած ժողովուրդին թեւ-թիկունք կանգնեցաւ, եկաւ ըսելու արար աշխարհին, որ հայը տկար չէ: Այս բոլորը մէկտեղուելով դարձան գէնք, արիւն, նահատակութիւն: Դաշնակցութեան շարքերուն մէջ չկայ ընկրկում, կայ ծառայութեան ու պայքարի մշտանորոգ կամք»:



տարուած են ընտրուիլ ուստի պէտք չէ ժողովուրդը անգամ մը եւս հիասթափութեան մատնել: Դատապարտելի են մեր ժողովուրդին համերաշխութիւնը վտանգող բոլոր անպատասխանատու դրսեւորումները, հարցերը լուծելու մենիշխանական մօտեցումները: Ցանկալի է միասնական ճիգերով ամրապնդել մեր երկրի ներքին ու արտաքին անվտանգութիւնը, հասարակութեան համերաշխութիւնը, պատմութենէն դասեր քաղելով նայիլ ապագային, դրպէսզի հայութեան հանրընդհանուր ճիգերու մէկտեղումով նոր թափ ստանայ մեր երկրին յառաջընթացը»:

Իր խօսքի աւարտին ան անդրադարձաւ սուրիահայութեան ներկայ մարտահրաւերներուն, Թուրքիոյ Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջաններ ներխուժման հետեւանքներուն եւ կոչ ուղղեց ըլլալու զգօս եւ համահայկական ճիգերով, Հայաստան-Սուրիա յարաբերութիւններու ամրապնդումով պահպանելու սուրիահայութեան անվտանգութիւնը, նպաստելով համայնքի վերականգնումին ու անոր պատմական դերակատարութեան պահպանման, որպէս Հայոց Ցեղասպանութենէն ճողոպրած մեր ժողովուրդին կարելի էր հատուածը, պատմական Հայաստանի ժառանգութիւնը կրող ու ցեղասպանութեան վկան հանդիսացող հայութեան կարելի էր մէկ մասնիկը:



Սրբազան հայրը սուրիահայութեան մարտնչող ոգիին անդրադառնալով նկատել տուաւ, որ մեզ մէ իւրաքանչիւրը հպարտ պէտք է ըլլայ յանուն մեր արժեքներուն իր մղած պայքարով եւ ձեռքբերումներով, որպէսզի նոր հորիզոններ բացուին մեր դիմաց ու թափ տանք վերանորոգման աշխատանքներու:

Հանդիսութիւնը իր աւատին հասաւ սրբազան հօր «Պահպանիչ» աղօթքով, ապա ԶՅԴ քայլերգով: